

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԻԶԵՎԱՆ – 2017

ՆԱԽԱԲԱՆ

Միքելի՝ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետազոծերի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային հա-

մակարգի գործառնությունները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրությունների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝



Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

I ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն:
- 1.3. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատաձևավալը

- 2.1. ԵՊՀ-ում բակալավրի ծրագրում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- 2.2. Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատաձևավալը 240 կրեդիտ է:
- 2.3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգարքներ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.4. Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:
- 2.5. Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը:
- 2.6. Ավարտական աշխատանքը գնահատվում 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը

3.1. Համակարգի հիմնադրույթները

- 3.1.1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
 - ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,

բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

3.1.2. Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),

բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականի ձևավորում:

3.1.3. Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

ա) *եզրափակիչ գնահատումով,*

բ) *առանց եզրափակիչ գնահատման,*

գ) *առանց ընթացիկ գնահատման,*

դ) *ստուգարքային:*

3.2. Դասընթացների գնահատումը

3.2.1. Եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում, քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրի մասնագրում:

3.2.2. Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունաբար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ($\Sigma P_{\text{ընթ.}}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից ($P_{\text{եզր.}}$), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$Q_{\text{արդ.}} = \Sigma P_{\text{ընթ.}} + P_{\text{եզր.}}:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով¹).

Աղյուսակ 1.

Գնահատման բաղադրամասը	$P_{\text{ընթ.1}}$	$P_{\text{ընթ.2}}$	$P_{\text{եզր.}}$	$Q_{\text{արդ.}}$
Առավելագույն միավորը	5	5	10	20

3.2.3. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

3.2.4. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Q_{\text{արդ.}}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ($\Sigma P_{\text{ընթ.}}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր,

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$Q_{\text{արդ.}} = \Sigma P_{\text{ընթ.}}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները

¹ Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5:

Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

(բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով²).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	Քննիչ 1	Քննիչ 2	Գարդ.
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

- 3.2.5. Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:
- 3.2.6. Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:
- 3.2.7. *Առանց ընթացիկ գնահատման* (միայն եզրափակիչ քննությամբ) և *առանց եզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները:
- 3.2.8. *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:

3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը

- 3.3.1. Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:
- 3.3.2. Ֆակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն, իսկ ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:
- 3.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում(այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):

² Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

- 3.3.4.** Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում: Բանավոր քննության և ստուգարքի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սքանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սքանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3.5.** Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգարքների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:
- 3.3.6.** Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տետրում ներկայացված պահանջները:
- 3.3.7.** Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունաբար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան սյունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:
- 3.3.8.** Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:
- 3.3.9.** Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն ռեկտորի հրամանով:

3.4. Գնահատման սանդղակը

- 3.4.1.** ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունաբար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»

8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»

3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:

3.5.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- գումարային կրեդիտներ,
- գնահատված կրեդիտներ,
- վարկանիշային միավորներ,
- միջին որակական գնահատական:

3.5.4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

3.5.5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով:

$$ԳԿ = \sum Կ_{\text{րեդիտ } i} :$$

3.5.6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումարն է:

$$ՎՄ = \sum Կ_{\text{րեդիտ } i} \times Գ_{\text{արդ } i} ,$$

որտեղ $Գ_{\text{արդ } i}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝

$$\text{ՎՄ} = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238 \text{՝ } 300 \text{ հնարավորից } (5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20):$$

3.5.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ $\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15,87 \text{՝ } 20$ հնարավորից:

3.5.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունաբար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

- 4.1.** Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում:
- 4.2.** Ընթացիկ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե չներկայանալու պատճառի մասին ուսանողը (կամ որևէ մեկը նրա անունից) նախօրոք կամ քննության օրը գրավոր իրազեկում է դեկանատին: Դիմումը վավերացնում է ֆակուլտետի դեկանը կամ դեկանի տեղակալը, և նույն օրը դեկանատի աշխատակիցը սքանավորման եղանակով այն ամրագրում է ԵՊՀ SuperVision ծրագրում: Հիվանդության պատճառով բացակայած ուսանողը բժշկական տեղեկանքը բուժման շրջանի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ներառյալ (ԵՊՀ հատուկ պոլիկլինիկայի կողմից վավերացնելուց հետո) ներկայացնում է դեկանատ: Այլ պատճառներով բացակայելու դեպքում ուսանողը ներկայացնում է բացակայության հարգելիությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ:
- 4.3.** Ընթացիկ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել դասերին հաճախման օրվանից սկսած 5 աշխատանքային օրվա ընթացքում, դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցով:
- 4.4.** Ստուգարքին և/կամ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է հանձնել

համապատասխան ստուգարքը և/կամ քննությունը, որը չի համարվի լուծարք, եթե բավարարվել են 4.2 ենթակետի բոլոր պահանջները: Այդ մասին ֆակուլտետի դեկանը համապատասխան գեկուցագիր է ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

4.5. Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ռեկտորատի կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ռեկտորի հրամանով:

4.6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի՝ 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Q_{արդ.} = 1 + 3 + 3 = 7$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարման շրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7:

4.7. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ՝ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 3 = 5$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:

4.8. *Առանց ընթացիկ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական

պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

- 4.9.** Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:
- 4.10.** Բակալավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով այդ առարկաների դասընթացները:
- 4.11.** Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ռեկտորատի սահմանած չափանիշների:

5. Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը

- 5.1.** Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:
- 5.2.** Բակալավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.
- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
 - վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
 - ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,
 - ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:
- 5.3.** Համալսարանն ավարտվելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ ԻՄ արխիվ:
- 5.4.** Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի դեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Դասընթացների տեղեկագիրքը

6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագիրք, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:

6.2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

7. Առցանց դասընթացի կազմակերպումը

7.1. ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:

7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:

7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:

7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:

7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոս-

- ներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:
- 7.6.** Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:
- 7.7.** Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

8. Պրակտիկայի կազմակերպումը

- 8.1.** Պրակտիկան ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:
- 8.2.** Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն) և մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական, մանկավարժական), իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:
- 8.3.** Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:
- 8.4.** Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:
- 8.5.** Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:
- 8.6.** Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:
- 8.7.** Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:
- 8.8.** Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
- 8.9.** Պրակտիկան գնահատվում է ստուգաբքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:

9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը

- 9.1.** Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասըն-

թացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

- 9.2. Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:
- 9.3. Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:
- 9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնում ուսանողներին:
- 9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:
- 9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:
- 9.7. Պաշտպանության ժամանակ գրագոյության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:
- 9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

10. Կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

- 10.1. Բակալավրի կրթական ծրագրի կամընտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական* և *մասնագիտական* կառուցամասերում:
- 10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամընտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երեքը:
- 10.3. Կամընտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:
- 10.4. Կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապրիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:
- 10.5. Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամընտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

11. Կրթական ծրագրի ղեկավարը

- 11.1. Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:
- 11.2. Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:
- 11.3. Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ՝ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝

որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

- 11.4. Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցներին:
- 11.5. Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:
- 11.6. Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:
- 11.7. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

12. Ուսումնական խորհրդատուն (կուրատոր)

- 12.1. Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:
- 12.2. Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:
- 12.3. Ուսումնական խորհրդատուն ուսանողների ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ներքին կարգապահական, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:
- 12.4. Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:
- 12.5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ուսանողն իրավունք ունի՝

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ ԻՄ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտածրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ ԻՄ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ ԻՄ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ ԻՄ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր

Անձնական համար	Ազգանուն անուն հայրանուն	Մասնագիտություն
125001	Մաթևոսյան Աշոտ Կարենի	«Տնտեսագիտություն»
7-րդ կիսամյակ		

Աշնանային կիսամյակ, 2011 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XXX/BXX	Դասընթաց-26	4	Լավ	13
XXX/BXX	Դասընթաց-27	4	Լավ	14
XXX/BXX	Կուրսային աշխատանք-27	2	Բավ.	12
XXX/BXX	Դասընթաց-28	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-29	5	Լավ	17
XXX/BXX	Դասընթաց-30	5	Գեր.	18
XXX/BXX	Դասընթաց-31	5	Գեր.	19
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		30	482	16.07

Ընդհանրացված արդյունքները 2011 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
210	172	2724	15.84

8-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2012 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XXX/BXX	Դասընթաց-32	4	Լավ	15
XXX/BXX	Դասընթաց-33	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-34	5	Գեր.	20
XXXX/BXX	Ամփոփիչ մասնագիտական բնութային	4	Գեր.	20
XXXX/BXX	Ավարտական աշխատանք	12	Լավ	17
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		30	524	17.47

Ընդհանրացված արդյունքները 2012 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
240	202	3248	16.08

Ամփոփիչ արդյունքներ

Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Արդյունաբար վարկանիշային միավորներ	Արդյունաբար ՄՈԳ
240	202	3248	16.08

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՎԵՐՋԸ

ԱՆՎԱԿԵՐ Է ԱՌԱՆՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՆԻՔԻ

Տեսուչ՝

Ֆակուլտետի ղեկան՝

Պրոդեկտոր՝

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ավարտական աշխատանքի պաշտպանության

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ուսանող՝

Ազգանուն անուն հայրանուն _____

Մասնագիտություն, խումբ _____

Ավարտական աշխատանքի թեմա _____

**Ավարտական աշխատանքի
ղեկավար _____**

(ազգանուն, անուն, գիտ. աստ., կոչում)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ազգանուն անուն _____

Գիտական աստիճան, կոչում _____

Պաշտոնը _____

**Ավարտական աշխատանքի գնահատման արդյունքներն ըստ
սահմանված որակական չափանիշների**

Թիվ	Հանձնաժողովի անդամներ (ազգանուն, անուն)	Գնահատման միավորն ըստ սահմանված որակական չափանիշների				Մտորագրու- թյուն
		1	2	3	4	
1						
2						
3						
4						
5						
6						
7						
Գնահատման միջին միավորը						

Թիվ	Որակական չափանիշը	Գնահատման միավորի սահ- մանված չափա- քանակը	Գնահատման միջին միավորը	Գումարային միավորը	Գնահա- տականը
1	Ներկայացման որակը	6			
2	Ձևակերպման որակը	6			
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6			
4	Արդիականությունը /նորությունը	2			

Գնահատականը ըստ գումարային միավորի

Գումարային միավորը	0...7	8...12	13...17	18...20
Գնահատականը	<i>«անբավարար»</i>	<i>«բավարար»</i>	<i>«լավ»</i>	<i>«գերազանց»</i>

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն որոշում է՝

- 1) Բակալավրի որակավորման աստիճան (դիպլոմ) շնորհելու վերաբերյալ

Շնորհել / Չշնորհել (ընթացակ)

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

« » _____ 200__ թ.

II ԲԱԺԻՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բակլավրի ուսումնական ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

«Ֆինանսներ» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՍՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ- տնտեսագիտական <i>պարտադիր</i> <i>կամընտրական</i>	36 <i>20</i> <i>16</i>	12 <i>10</i> <i>2</i>
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական <i>պարտադիր</i>	10 <i>10</i>	4 <i>4</i>
Ընդհանուր և հատուկ մասնագիտական <i>Պարտադիր</i> <i>կամընտրական</i>	170 <i>158</i> <i>12</i>	40 <i>36</i> <i>4</i>
Կրթական այլ մոդուլներ	24	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	61

«Զբոսաշրջություն» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՍՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ- տնտեսագիտական <i>պարտադիր</i> <i>կամընտրական</i>	28 <i>24</i> <i>4</i>	10 <i>8</i> <i>2</i>
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական <i>պարտադիր</i> <i>կամընտրական</i>	10 <i>8</i> <i>2</i>	5 <i>4</i> <i>1</i>
Ընդհանուր և հատուկ	174	39

մասնագիտական պարտադիր	157	34
կամրնտրական	13	3
կուրսային	4	2
աշխատանքներ		
Կրթական այլ մոդուլներ	28	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	59

Ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը ծրագրում ըստ ուսումնական տարիների սահմանափակված է հետևյալ չափաքանակներով.

1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի
30 ժամ*	28 ժամ*	26 ժամ	24 ժամ

* Առանց ֆիզդաստիարակության ժամերի հաշվառման

* Առանց ֆիզդաստիարակության ժամերի հաշվառման

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցման, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 240 կրեդիտի: Ուսումնառության 8-րդ՝ վերջին կիսամյակը, 4 շաբաթ է:

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամրնտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

«Ֆինանսներ» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ) ²	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	30(6/24/0/0)	1	ստուգաթք
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգաթք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30(24/0/6/0)	1	ստուգաթք
Հայոց լեզու և	2	30(6/24/0/0)	2	հանրազում.

գրականություն-2				
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30(24/0/6/0)	2	հանրագում.
Փիլիսոփայության հիմունքներ	4	60(45/0/15/0)	3	հանրագում.
Անգլերեն -1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն -1				
Անգլերեն -2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն -2				
Անգլերեն -3	4	60(0/60/0/0)	3	հանրագում.
Ռուսաց լեզու-3				
Ֆրանսերեն -3				
Ֆիզդաստիարակություն	-	120(0/120/0/0)	2, 4	ստուգարք

«Զբոսաշրջություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ա/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30(24/0/6/0)	1	ստուգարք
Էթիկա և վարվեցողության հիմունքներ	-	30(30/0//0)	1	ստուգարք
Հայոց լեզու և գրականություն-2	2	30(6/24/0/0)	2	հանրագում.
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30(24/0/6/0)	2	հանրագում.
Ռուսաց լեզու-2	4	60(0/6/0/0)	2	ստուգարք
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում.
Փիլիսոփայության հիմունքներ	4	60(45/0/15/0)	3	հանրագում.
Ֆիզդաստիարակություն	-	128(0/128/0/0)	2, 4,5,6	ստուգարք

ՀՍ կամընտրական դասընթացներ

ՀՍ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

«Ֆինանսներ» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Կրոնների պատմություն	2	30(30/0/0/0)	3	ստուգարք
Մշակութաբանություն				
Իրավագիտություն	2	30(30/0/0/0)	4	ստուգարք
Քաղաքագիտություն				

«Զբոսաշրջություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մշակութաբանություն	2	30(30/0/0/0)	3	ստուգարք
Կրոնների պատմություն				
Քաղաքագիտություն	2	30(30/0/0/0)	4	ստուգարք
Աշխարհագրություն				

2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները.

«Ֆինանսներ» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Համակարգչից օգտվելու հմտություններ	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	30(30/0/0/0)	1	ստուգարք
Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	2	30(30/0/0/0)	1	ստուգարք

Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4	60(30/30/0/0)	5	ստուգարք
---	---	---------------	---	----------

« Զբոսաշրջություն » մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Համակարգչից օգտվելու հմտություններ	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	30(30/0/0/0)	1	ստուգարք
Մաթեմատիկայի հիմունքներ	2	30(30/0/0/0)	2	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4	30(30/30/0/0)	6	ստուգարք

2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Ֆինանսներ
2. Զբոսաշրջություն

Կրթական ծրագրի ընդհանուր (ԸՄԴ) և հատուկ մասնագիտական (ՀՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

« Ֆինանսներ » մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Տնտեսագիտության տեսություն -1	6	90(45/0/45/0)	1	էզր. գնահատ.
Մաթեմատիկական անալիզ-1	6	90(45/45/0/0)	1	էզր. գնահատ.
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ	6	90(45/45/0/0)	2	էզր. գնահատ.
Տնտեսական ինֆորմատիկա	2	30(15/15/0/0)	2	առ. էզր. գնահ.

Տնտեսագիտության տեսություն -2	4	60(30/0/30/0)	2	եզր.գնահատ.
Մաթեմատիկական անալիզ-2	6	90(45/45/0/0)	2	եզր.գնահատ.
Գործունեության հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	6	90(45/45/0/0)	3	եզր.գնահատ.
Հավանականություն և կիրառական վիճակագրություն	5	60(30/30/0/0)	3	եզր.գնահատ.
Ֆինանսական հաշվարկների հիմունքներ	4	60(30/30/0/0)	3	առ.եզր.գնահ.
Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ	4	60(30/0/30/0)	3	եզր.գնահատ.
Տնտեսական իրավիճակների մոդելավորում	4	60(45/15/0/0)	4	եզր.գնահատ.
Վիճակագրություն	5	60(30/30/0/0)	4	եզր.գնահատ.
Համաշխարհային տնտեսություն	4	60(30/0/30/0)	4	եզր.գնահատ.
Տնտեսագիտական մտքի պատմություն	4	60(30/0/30/0)	4	առ.եզր.գնահ.
Պետական ֆինանսներ	3	45(30/0/15/0)	4	առ.եզր.գնահ.
Համակարգչային պրակտիկում	3	45(0/45/0/0)	4	առ.եզր.գնահ.
Ձեռնարկության էկոնոմիկա	4	60(30/0/30/0)	5	եզր.գնահատ.
Միկրոտնտեսագիտություն	4	60(30/30/0/0)	5	եզր.գնահատ.
Միջազգային տնտեսագիտություն	4	60(30/0/30/0)	5	եզր.գնահատ.
Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ	4	60(30/0/30/0)	5	առ.եզր.գնահ.
Էկոնոմետրիկա	4	60(30/30/0/0)	5	եզր.գնահատ.
Հաշվապահական հաշվառում -1	4	60(30/30/0/0)	5	առ.եզր.գնահ.
Բանկային գործ	6	90(45/15/30/0)	6	եզր.գնահատ.
Կառավարչական հաշվառում	4	60(30/30/0/0)	6	առ.եզր.գնահ.
Ռիսկերի կառավարում և ապահովագրություն	2	30(15/0/15/0)	6	առ.եզր.գնահ.
Մակրոտնտեսագիտություն	4	60(30/30/0/0)	6	եզր.գնահատ.
Հաշվապահական հաշվառում -2	4	60(30/30/0/0)	6	եզր.գնահատ.
Մենեջմենթ	6	75(45/0/30/0)	7	եզր.գնահատ.
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	6	75(45/0/30/0)	7	եզր.գնահատ.
Տնտեսական գործունեության վերլուծություն	4	60(30/30/0/0)	7	եզր.գնահատ.
ՀՀ հարկային համակարգ	6	30(15/0/15/0)	7	առ.եզր.գնահ.
Ֆինանսների կառավարում	5	60(30/0/30/0)	7	եզր.գնահատ.
Մարքեթինգի հիմունքներ	3	30(15/0/15/0)	7	առ.եզր.գնահ.
Տնտեսության պետական կարգա- վորում	6	80(48/0/32/0)	8	հանրագում.
Բիզնեսի կազմակերպում և կառա- վարում	5	80(48/32/0/0)	8	հանրագում.
ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ				

Գործավարություն օտար լեզվով (ռուսերեն)	4	60(0/60/0/0)	4	առ. եզր. գնահ.
Գործավարություն օտար լեզվով (ֆրանսերեն)				
Գործավարություն օտար լեզվով (անգլերեն)				
Բնատիտուցիոնալ տնտեսագիտություն	3	30(24/0/6/0)	5	առ. եզր. գնահ.
Մաքսային հսկողություն				
Ռազմավարական կառավարում				
Տնտեսական պատմություն	3	30(24/0/6/0)	6	առ. եզր. գնահ.
Անշարժ գույքի գնահատում				
Բանկային նոր տեխնոլոգիաներ				
Կորպորատիվ կառավարում և էթիկա	3	30(30/0/0/0)	7	առ. եզր. գնահ.
Վարկային գործառնություններ				
Աուդիտի հիմունքներ				
Միջազգային տնտեսական հարաբերություններ	3	30(30/0/0/0)	8	առ. եզր. գնահ.
Ներդրումների կառավարման հիմունքներ				
Ֆինանսական ռիսկերի կառավարում				
Հաշվապահական ծրագրեր	3	30(30/0/0/0)	2	առ. եզր. գնահ.
Միջազգային բիզնեսի հիմունքներ				
Ներդրումային հիմնադրամներ				
Ֆինանսական իրավունք				

« Զբոսաշրջություն » մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսա մյակ	Գնահատման ձևը
Զբոսաշրջության հիմունքներ	4	60(45/0/15)	1	եզր. գնահատ.
Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	3	90(30/0/15)	1	առ. եզր. գնահ.
Զբոսաշրջային երկրագրություն	4	90(30/15/0)	1	եզր. գնահատ.
Մարդը և նրա պահանջմունքները	3	45(30/15/0)	1	առ. եզր. գնահ.
Տնտեսագիտություն	4	90(60/0/0/30)	2	եզր. գնահ.
Ռեկրեացիայի աշխարհագրություն	3	45(30/0/15)	2	առ. եզր. գնահ.
Հայ ազգագրություն	3	45(30/0/15)	2	առ. եզր. գնահ.

Զբոսաշրջության հոգեբանություն	3	45(30/15/0)	3	առ. եզր. գնահ.
Հյուրընկալության ինդուստրիա	4	60(30/15/15)	3	եզր. գնահատ.
Բնակչության աշխ. ժող. հիմունքներով	4	60(45/0/15)	3	եզր. գնահ.
Գիտական հետազոտության մեթոդներ	3	45(30/15/0)	3	առ. եզր. գնահ.
Զբոսաշրջության սոցիոլոգիա	3	45(30/15/0)	3	առ. եզր. գնահ.
Անիմացիոն ծառայությունները զբոսաշրջության մեջ	3	45(30/15/0)	3	առ. եզր. գնահ.
Համաշխարհային տնտեսության աշխարհագրություն	5	75 (45/15/15)	4	եզր. գնահ.
Թանգարանագիտություն	2	30(30/0/0)	4	առ. եզր. գնահ.
Զբոսաշրջության մենեջմենթ	4	60(30/0/30)	4	եզր. գնահատ.
Սոցիալ-տնտեսական վիճակագրություն	3	45(30/15/0)	4	առ. եզր. գնահ.
Միջազգային զբոսաշրջություն	4	60(45/0/15)	5	եզր. գնահատ.
Հայաստանի աշխարհագրություն	5	75(45/0/30)	5	եզր. գնահ.
Էքսկուրսիոն գործ	3	45(30/0/15/0)	5	առ. եզր. գնահ.
Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեություն	3	45(30/15/0/)	5	առ. եզր. գնահ.
Բուժ. առողջարարական զբոսաշրջություն	3	45(30/0/15)	5	առ. եզր. գնահ.
Զբոսաշրջության մարքեթինգ	3	45(30/0/15)	5	առ. եզր. գնահ.
Գործարար շփումների էթիկա	4	60(30/15/15)	6	առ. եզր. գնահ.
Իրավունքը զբոսաշրջության մեջ	4	60(45/0/15)	6	եզր. գնահատ.
Անվտանգությունը զբոսաշրջության մեջ	3	45(30/0/15)	6	առ. եզր. գնահ.
Էկոլոգիական զբոսաշրջություն	4	60(45/0/15)	6	եզր. գնահ.
Գյուղական զբոսաշրջություն	4	60(45/0/15)	7	եզր. գնահ.
Հայաստանի բնական և պատմաճարտ. հուշարձանները	4	60(30/0/30)	7	եզր. գնահ.
Զբոսաշրջությունը և բնության պահպանությունը	4	60(30/0/30)	7	առ. եզր. գնահ.
PR և գովազդը տուրիզմում	4	60(45/0/15)	7	եզր. գնահ
Ծրագրային զբոսաշրջության	4	60(30/15/15)	7	առ. եզր. գնահ.
Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձաններ	4	60(45/0/15)	7	առ. եզր. գնահ.
Հայկական սփյուռքի աշխարհագրություն	4	48(32/0/16)	8	Հնրգ.
Զբոսաշրջա-ռեկրեացիոն նախագծում	3	48(32/16)	8	Հնրգ.

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ				
Անգլերեն -1	4	60(0/60/0/0)	1	առ. եզր. գնահ.
Ֆրանսերեն -1				
Անգլերեն-2	4	60(0/60/0/0)	2	առ. եզր. գնահատ.
Ֆրանսերեն -2				
Անգլերեն-3	4	60(0/60/0/0)	3	առ. եզր. գնահ
Ֆրանսերեն – 3				
Անգլերեն - 4	6	90(0/90/0/0)	4	եզր. գնահատ.
Ֆրանսերեն - 4				
Երկրորդ օտար լեզու-1 /անգլերեն/	6	90(0/90/0/0)	5	առ. եզր. գնահ
Երկրորդ օտար լեզու-1 /ֆրանսերեն/				
Կամրնտրական առարկաներ				
Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման մեթոդներ	3	45(30/0/15)	5	Առ. եզր. գնահ.
Ժամանցի կազմակերպման տեխնոլոգիաները զբոսաշրջության մեջ				
Կամրնտրական առարկաներ				
Տավուշի մարզի բնական և պատմաճարտ. հուշարձանները	3	45(30/0/15)	6	Առ. եզր. գնահ.
Զբոսաշրջային ռեսուրսագիտություն				
Կամրնտրական առարկաներ				
Երկրորդ օտար լեզու- անգլերեն - 2	6	90(0/90/0/0)	6	եզր. գնահ
Երկրորդ օտար լեզու- ֆրանսերեն-2				
Կամրնտրական առարկաներ				
Անձնակազմի կառավարում	3	45(30/0/15)	7	Առ. եզր. գնահ.
Որակի կառավարում				
Կամրնտրական առարկաներ				
Հնագիտության հիմունքներ	3	45(30//0/15)	7	առ. եզր. գնահ
Հայ և համաշխարհային արվեստ				

Կամընտրական առարկաներ				
Տուրիստական ծառայությունների ստանդարտացում և սերտիֆիկացում	3	48(32/0/16)	8	հնրգ.
Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ				

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2-ական կրեդիտ աշխատաձևով կուրսային 2 աշխատանքների կատարում, որոնց արդյունքների ստուգումը իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով):

2.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

«Ֆինանսներ» մասնագիտություն

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Արտադրական պրակտիկա	4	6	ստուգարք
Կուրսային աշխատանք-1	2	4	հանրագում.
Կուրսային աշխատանք-2	2	6	հանրագում.
Ամփոփիչ ավարտական քննություն	8	8	հանրագում.
Ավարտական աշխատանք	8	8	հանրագում.

«Զբոսաշրջություն» մասնագիտություն

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ուսումնական պրակտիկա -1	4	2	ստուգարք
Ուսումնական պրակտիկա -2	4	4	ստուգարք
Կուրսային աշխատանք-1	2	4	հանրագում.
Կուրսային աշխատանք-2	2	6	հանրագում.
Արտադրական պրակտիկա	4	8	ստուգարք
Ամփոփիչ ավարտական քննություն	4	8	հանրագում.
Ավարտական աշխատանք	12	8	հանրագում.

Մաս II.
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է տնտեսագիտության ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է .

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2.1. Պարտադիր դասընթացներ

0302/B01. «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»-1 (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1–ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների ամրակայմանը: Բոլոր ֆակուլտետների տարբեր բաժիններում դասընթացի թեմաները համապատասխանաբար զուգադրել տվյալ մասնագիտության պահանջներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները,

- ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին,
- ունակ կլինի ճիշտ գործածել մասնագիտական բառապաշարը, տերմինաբանությունը,
- ունակ կլինի գործնականում կիրառել լեզվաոճական հնարքները:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**
- կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հայ հին գրականություն: **Թեմա 2**՝ Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: **Թեմա 3** Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: **Թեմա 4**՝ Ոճերի դասակարգումը: Մասնագիտական տեքստերի ոճական առանձնահատկությունների քննություն: Հայ միջնադարյան գրականություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

0305/B02. «ՌՈՒՄՍՅՆԼԵՁՈՒ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**
- կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին,
- ունակ կլինի գրագիտորեն կազմելու իր բանավոր խոսքը,
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**
- Կկարողանա մասնակցել տարաբնույթ երկխոսությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: **Թեմա 2**՝ Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: **Թեմա 3**՝ Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին. միմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: **Թեմա 4**՝ Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի

դասակարգումը և նրանց քերականական կարգերը: **Թեմա 5՝** Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակերցման ուղղվածության:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

0304/B03. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ»-1 (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեոնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կտիրապետի հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմության հիմնական փաստական նյութին:

- կկարողանա ներկայացնել պատմական տվյալ ժամանակահատվածի

իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:

- կկարողանա արժևորել պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***

- կկարողանա տարբերակել և գնահատել մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:

Բովանդակությունը.

Ներածություն: Թեմա 1՝ Հայաստանը հնագույն շրջանում: **Թեմա 2՝** Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VI դդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-V դդ.): **Թեմա 3՝** Հայաստանը վաղ միջնադարում: **Թեմա 4՝** Հայաստանը զարգացած միջնադարում: **Թեմա 5՝** Հայաստանը ուշ միջնադարում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0302/B05. «ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»-2(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները.
- ծանոթ կլինի հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին:
- Ունակ կլինի ճիշտ գործածել քերականական ձևերը
- գործնականում կիրառել ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարարներ

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ,
- կկարողանա կատարել քննական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: **Թեմա 2՝** Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: **Թեմա 3՝** Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: **Թեմա 4՝** Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:

0305/B06. «ՌՈՒՍՍԻ ԼԵՁՈՒ»-2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**
 - ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական կանոնների վերաբերյալ,
 - մասնագիտական լեզվի տերմինաբանության ոլորտում:
 - ունակ կլինի կատարել մասնագիտական տեքստի շարահյուսական վերլուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկությունները,
 - վերլուծել և վերարտադրել մասնագիտական տեքստը:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**
 - կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը:
Թեմա 2՝ Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: **Թեմա 3՝** Շարահյուսություն. Միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: **Թեմա 4՝** Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: **Թեմա 5՝** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

0304/B07. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ»-2(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմության վերլուծության վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կտիրապետի հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմության հիմնական փաստական նյութին:
- կկարողանա ներկայացնել պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
- կկարողանա արժևորել պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**
- կկարողանա տարբերակել և գնահատել մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: **Թեմա 2՝** Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: **Թեմա 3՝** Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: **Թեմա 4՝** Հայ ազգային-ազատագրական զինված պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 5՝** Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 6՝** Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: **Թեմա 7՝** Հայաստանը 1917թ. Ռուսական հեղափոխությունների շրջանում: **Թեմա 8՝** Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): **Թեմա 9՝** Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): **Թեմա 10՝** Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): **Թեմա 11՝** Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 6 միավոր արժեքով:

0304/Յ09. «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ) Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- գիտելիքների կունենա կեցության համընդհանուր օրենքների և կատեգորիաների մասին, կեցության հիմնական ձևերի և դրանց առանձնահատկությունների մասին:

- ունակ կլինի տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից և այլն:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

-տեղին և ժամանակին գործածել փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2՝** Կեցություն և մատերիա: **Թեմա 3՝** Դիալեկտիկա: **Թեմա 4՝** Բնություն: **Թեմա 5՝** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6՝** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7՝** Գիտություն: **Թեմա 8՝** Հասարակություն: **Թեմա 9՝** Մշակույթ: Անձ: Ապագա:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց:

0305/B12. «ԱՆԳԼԵՐԵՆ» -1(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

Կիմանա՝

- արտասանության և ուղղագրության կանոնները,
- բառակազմության եղանակները,
- բառապաշարի շերտերը,
- խոսքի մասերի քերականական կարգերը,
- նախադասության շարադասությունը:

Կկարողանա՝

- թվարկել հնչյունների և հնչույթների արատասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը, բառակազմության միջոցները,
- տարբերակել խոսքի մասերը և խոսքի մասերի քերականական կարգերը,
- հաղորդակցվել «Ընտանիք», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երագանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը» և այլ թեմաների շուրջ,
- կարդալ և թարգմանել բուն մասնագիտական մատչելի տեքստեր:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա կիրառել ձեռք բերած գիտելիքները գրավոր և բանավոր հաղորդակցության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: **Թեմա 2՝** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): **Թեմա 3՝** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): **Թեմա 4՝** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երագանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0305/B12. «ՖՐԱՆՍԵՐԵՆ» -1(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- ֆրանսերենի հնչյունական, քերականական հիմնական դրույթների և բառային ֆոնդի վերաբերյալ:

- ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը: Կարողալ և թարգմանել մասնագիտական տեքստեր:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- վարելու երկխոսություններ, կատարելու համապատասխան տեքստերի վերարտադրություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2՝** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3՝** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4՝** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: **Թեմա 5՝** Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: **Թեմա 6՝** Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտոված դերանուններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

0305/B123 «ԱՆԳԼԵՐԵՆ » -2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

Կիմանա՝

- Ճիշտ օգտագործել տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու առոգանությունը,
- կրնդլայնի վերարտադրողական և ընկալողական բառապաշարը,
- ձեռք կրերի հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և հասարակական կյանքի մասին,
- կիմանա մասնագիտական տերմինների թարգմանությունը և իմաստը, կծանոթանա մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգին:

Ունակ կլինի՝

- կարդալ և թագմանել միջին բարդության մասնագիտական տեքստեր,
- կկարողանա ընկալել և վերարտադրել միջին բարդության տեքստեր:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա ակտիվ մասնակցություն ունենալ քննարկումների և երկխոսությունների ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: ***Թեմա 3՝*** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: ***Թեմա 4՝*** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: ***Թեմա 5՝*** Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0305/B13. «ՖՐԱՆՍԵՐԵՆ» -2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ),

- կարդալ, թարգմանել, վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել գեղարվեստական և մասնագիտական բնույթի տեքստ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կկարողանա գրույց վարել անցած թեմաներով, ձևակերպել գործնական գրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les fu-nerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour-fleurs, des casse-croute և այլն): **Թեմա 2՝** Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝ un homme grand-un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 3՝** Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, le quel և այլն (դասակարգում): **Թեմա 4՝** Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղծական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

0305/B14. «ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒ»-3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանային համակարգին:
- ունակ կլինի մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր,
- ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ

- կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,
- կկարողանա թարգմանել տարբեր բարդության մասնագիտական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: **Թեմա 2՝** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: **Թեմա 3՝** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանություն: **Թեմա 4՝** Գիտական զեկույցների, մասնագիտական ռեֆերատների, անոտացիաների, կոնսպեկտների կառուցման հիմնական սկզբունքներ: Դիմումների, գրությունների, արձանագրությունների, ինքնակենսագրությունների, բնութագրերի կառուցման հիմնական սկզբունքները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

0305/B14 ԱՆԳԼԵՐԵՆ »-3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է նոր, առավել հազեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ գուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

Կիմանա՝

- ձեռք կբերի առավել հազեցված մասնագիտական բառապաշար՝ հոմանիշ-հականիշ բառերի օժանդակությամբ,
- կիմանա նոր բառակապակցություններ և արտահայտություններ,
- կիմանա նամակագրություն, ինքնակենսագրություն, դիմում գրելու ձևերը,

- կծանոթանա նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներին և նրանց կիրառությանը:

Կկարողանա՝

- ձեռքբերած բառապաշարի կիրառմամբ շփվել և հաղորդակցվել մասնագիտական թեմաների շուրջ, գրել գործարար նամակներ, դիմում, ինքնակենսագրություն (CV):

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա ազատ կարդալ, թարգմանել, հաղորդակցվել, շփվել գործարար մարդկանց շրջանում և ազատ արտահայտել իր մտքերը տվյալ բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: **Թեմա 2՝** Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: **Թեմա 3՝** Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: **Թեմա 4՝** Առաջարկվող թեմաներ՝ «Մերոնդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար՝ նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:

0305/B14. «ՖՐԱՆՍԵՐԵՆ»-3 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- ծանոթ կլինի ֆրանսերեն լեզվի խոնարհման համակարգին, նախդիրների դասակարգմանը, ժամանակների համաձայնության կանոններին:

- կարդալ և հասկանալ բնագիր մասնագիտական տեքստեր:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա առանց բառարանի կարդալ և վերաշարադրել միջին բարդության հասարակական-քաղաքական և տնտեսագիտական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում, քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2՝** Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), impératif (հրամայական եղանակ): **Թեմա 3՝** Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անձանոթ տեքստը մասնագիտական թեմայով, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը, երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

2.2. Կամընտրական դասընթացներ

0202/B15. «ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 3-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***
 - գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին:
 - ունակ կլինի. կիրառելու մշակույթի բաղադրիչները, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները,
- ✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***
 - օգտագործել ընդհանուր գիտելիքները համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումները, գործառույթները, մշակույթի էության,

ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2՝** Մշակույթ և քաղաքակրթություն: **Թեմա 3՝** Բնություն և մշակույթ: **Թեմա 4՝** Հասարակություն, մշակույթ և մարդ: **Թեմա 5՝** Էթոս, լեզու և մշակույթ: **Թեմա 6՝** Մշակույթի ծագումը, նրա զարգացման հիմնական փուլերը և միտումները: **Թեմա 7՝** Համաշխարհային մշակույթի պատմություն: **Թեմա 8՝** Հայ մշակույթի պատմություն: **Թեմա 9՝** Ժամանակակից ինֆորմացիոն հասարակության մշակույթը և մշակութային ժառանգության պահպանման խնդիրը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0304/B15. «ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 3-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***
 - կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը,
 - կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
- ✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***
 - կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2՝** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3՝** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4՝** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5՝** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6՝**

Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7**՝ Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8**՝ Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9**՝ Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10**՝ Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0304/B16. «ՔՄՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***
 - կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին.
 - կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ու նակություններ,
- ✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***
 - կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: **Թեմա 2**՝ Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: **Թեմա 3**՝ Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: **Թեմա 4**՝ Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5**՝ Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 6**՝ Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 7**՝ Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 8**՝ Քաղաքական գաղափարախոսություններ: **Թեմա 9**՝ Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0202/B04. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ աշխարհագրության դասընթացի բնական երևույթների ու համակարգերի վերաբերյալ, ձևավորել գիտելիքներ հետագա ուսումնառության ընթացքում աշխարհագրական այլ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- կիմանա բնական աշխարհագրության առանձին ոլորտներն ու նրանցում տեղի ունեցող երևույթները
- կտիրապետի մասնագիտության առանչվող աշխարհագրական կարևոր հասկացություններին, աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բնածին և մարդածին երևույթներին

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կկարողանա ստացած գիտելիքներն օգտագործել հասարակական աշխարհագրություն առարկան ուսումնասիրելիս

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկիր մոլորակն արեգակնային համակարգում: **Թեմա 2՝** Երկրագնդի ոլորտային կառուցվածքը: Աշխարհագրական թաղանթ: **Թեմա 3՝** Քարոլորտ և նրա կառուցվածքը: Քարոլորտում տեղի ունեցող երևույթներն ու դրանց աշխարհագրական-ռեկրեացիոն գնահատականը: **Թեմա 4՝** Մթնոլորտ և նրա կառուցվածքը: Մթնոլորտում տեղի ունեցող երևույթներն ու դրանց աշխարհագրական-ռեկրեացիոն գնահատականը: **Թեմա 5՝** Ջրոլորտ և նրա կառուցվածքը: Ջրոլորտում տեղի ունեցող երևույթներն ու դրանց աշխարհագրական-ռեկրեացիոն գնահատականը: : **Թեմա 6՝** Կենսոլորտ և նրա կառուցվածքը: Կենսոլորտում տեղի ունեցող երևույթներն ու դրանց աշխարհագրական-ռեկրեացիոն գնահատականը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամադրված հարցաշարից), որոնցից առնվազն 2-ին դրական պատասխանող ուսանողը կունենա ստանում է «ստուգված»:

0304/B16. «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

-կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը, օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները, կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

-ունակ կլինի գործնականում կիրառելու ձեռք բերած գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պետության և իրավունքի տեսություն:***Թեմա 2՝ Սահմանադրական իրավունք: Թեմա 3՝***Քաղաքացիական իրավունք: ***Թեմա 4՝*** Քրեական իրավունք: ***Թեմա 5՝***Աշխատանքային իրավունք: ***Թեմա 6՝*** Ընտանեկան իրավունք: ***Թեմա 7՝*** Տեղական ինքնակառավարում: ***Թեմա 8՝*** Վարչական իրավունք: ***Թեմա 9՝***Դատավարական իրավունք: ***Թեմա 10՝*** Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ:***Թեմա 11՝*** Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրությունը: ***Թեմա 12՝*** Միջազգային իրավունք:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամադրված հարցաշարից), որոնցից առնվազն 2-ին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

3.1. Պարտադիր դասընթացներ

0104/B01. «ՀԱՄԱԿԱՐԳԶԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակերը՝ 1–ին (2–րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել և զարգացնել համակարգչից արդյունավետ օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսմումնառության ընթացքում, մասնագիտական, գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելիս, առօրյայում, և հիմք կհանդիսանան համակարգչով աշխատելու կարողությունների հետագա զարգացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կլիմանա՝ համակարգչային սարքերի, Windows օպերացիոն համակարգի, համացանցի, Microsoft Office կիրառական փաթեթի ծրագրերի հիմնական հնարավորությունները և աշխատանքների սկզբունքները:
- կկարողանա՝ աշխատել Windows միջավայրում, համացանցում, Microsoft Office կիրառական փաթեթի ծրագրերով (Word, Excel, Power Point), օգտվել էլեկտրոնային փոստից, գրադարաններից, կիրառել ստացած գիտելիքները ինքնուրույն, կուրսային, ավարտական աշխատանքների, մասնագիտական հետազոտությունների, վերլուծությունների կատարման, պրեզենտացիաների պատրաստման ժամանակ:
- կտիրապետի՝ համակարգչով արդյունավետ աշխատելու հմտություններին:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***

- ունակ կլինի արդյունավետ աշխատել համակարգչով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: **Թեմա 2՝** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: **Թեմա 3՝** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: **Թեմա 4՝** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

0105/B02. «ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 1-ին, 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- էկոլոգիայի որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի էկոլոգիայի, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների վերաբերյալ:
- Ունակ կլինին կատարել ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական անալիզներ:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***

- վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: **Թեմա 2՝** Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: **Թեմա 3՝** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: **Թեմա 4՝** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: **Թեմա 5՝** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: **Թեմա 6՝** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: **Թեմա 7՝** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: **Թեմա 8՝** Պոպուլյացիոն էկոլոգիա: **Թեմա 9՝** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

0105/B03. «ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՅԵՊՑԻԱՆԵՐ» (2կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- բնագիտության զարգացման հիմնական փուլերի, բնագիտության հիմնական սկզբունքների, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաների վերաբերյալ:

- ունակ կլինի բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները կիրառել տնտեսագիտական տարբեր հետազոտություններում:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ

- կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Բնագիտության պարբերականությունը և ժամանակագրությունը: **Թեմա 3՝** Բնագիտության հիմնական և կիրառական պրոբլեմները: **Թեմա 4՝** Փիլիսոփայությունը և բնագիտության մաթեմատիկացումը, ֆիզիկա և ֆիզիկական կապերը: **Թեմա 5՝** Քիմիա: **Թեմա 6՝** Կյանքի առաջացման կոնցեպցիաները և պատկերացումներ տիեզերքի մասին:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

0001/B04. «ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակները՝ 5-րդ, 6-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը, ինչպես նաև զարգացնելքսրեմալ պայմաններում մինչբժշկական օգնության ցուցաբերման հմտությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- հնարավոր ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և անհրաժեշտ պաշտպանվելու ձևերի ու մեթոդների մասին:

- արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

- ունակ կլինի ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնելու պաշտպանվելու ձևերն ու մեթոդները,

- էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն,

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***

- ստեղծագործաբար մոտենալու ԱԻ-ում և պատերազմական պայմաններում անհրաժեշտ պաշտպանվելու ձևերին ու մեթոդներին:

- ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: **Թեմա 2՝** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **Թեմա 3՝** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: **Թեմա 4՝** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: **Թեմա 5՝** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: **Թեմա 6՝** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 7՝**

Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **Թեմա 8՝** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 9՝** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 10՝** Սուր հիվանդություններ և թունավորումներ: **Թեմա 11՝** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 12՝** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

3.2. Կամընտրական դասընթացներ

0105/B04 «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ հումանիտար մասնագիտության ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական խնդիրների ճիշտ ձևակերպման մտածողության, այդ խնդիրների լուծման արդյունավետ և ռացիոնալ ճանապարհների ընտրության ճիշտ կողմորոշման մաթեմատիկական ունակություն: Հստակ ուշադրություն դարձնել մասնագիտական աշխատանքի հետ կապված անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու մաթեմատիկական մշակույթի ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- կտիրապետի թվերի տեսության հիմունքներին և նրանց մաթեմատիկական հաշվարկներ կատարելու հնարքներին,
- կհասկանա մաթեմատիկայի լեզուն և կկարողանա արդյունավետ կիրառել մասնագիտական ոլորտներում,

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա թվերով, գծապատկերներով, սանդղակներով ձևավորել վերջնարդյունք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնական, ամբողջ, ռացիոնալ, իռացիոնալ, իրական և կոմպլեքս թվեր, անվերջ փոքրեր և անվերջ մեծեր: **Թեմա 2՝** Անալիտիկ երկրաչափությունը հարթության վրա: Էվկլիդեսի եռաչափ տարածությունը: **Թեմա 3՝** Ֆունկցիա: Տարրական ֆունկցիաներ: Ֆունկցիայի անընդհատությունը և սահմանը: Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվներ: Նրանց կիրառական նշանակությունը: **Թեմա**

4՝ Բազմությունների տեսության տարրերը: Պատահույթների հավանականությունը: Վիճակագրության տարրերը: **Թեմա 5՝** Մաթեմատիկական մոդելավորում և հաշվողական էքսպերիմենտներ: Կերպարների մաթեմատիկական ընկալումներ: Համակարգիչը և կյանքը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

4.1. «Ֆինանսներ» մասնագիտություն

0201/B01. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 45 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական օրինաչափություններին, նրանց մոտ զարգացնելով անհրաժեշտ ունակություններ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և միկրոտնտեսագիտական ավելի կոնկրետ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- Սահմանել շուկայական տնտեսության միկրոտնտեսական օրինաչափությունները:
- Ծանոթ կլինի տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կառավարության տնտեսական վարքագծի հիմնական սկզբունքներին,
- կիմանա շուկաների տիպային մոդելները:
- ունակ կլինի՝
- սպառողի նախընտրությունների, գների և եկամուտների հիման վրա բացահայտել բարիքների որոշակի իմաստով լավագույն հավաքածուն,
- որոշել ձեռնարկության շահույթը մաքսիմալացնող ռեսուրսների քանակները,
- իրավիճակի հնարավոր փոփոխությունների պայմաններում կանխատեսել սպառողի և/կամ ձեռնարկության վարքագիծը

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կունենա անհրաժեշտ միկրոտնտեսագիտական գիտելիքներ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտության առարկան և ուսումնասիրության մեթոդը: **Թեմա 2՝** Անսահմանափակ պահանջումների բավարարման հնարավորությունը սահմանափակ ռեսուրսների պայմաններում: **Թեմա 3՝** Տնտեսական համակարգերը և շրջապատույտը: **Թեմա 4՝** Պահանջարկի և առաջարկի հիմունքները: **Թեմա**

5՝ Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը և դրա նշանակությունը: **Թեմա 6՝** Սպառողի վարքի տեսության հիմունքները: **Թեմա 7՝** Արտադրողի վարքի և արտադրության ծախքերի տեսության հիմունքները: **Թեմա 8՝** Շուկայի հիմնական մոդելները: Կատարյալ մրցակցային շուկա: **Թեմա 9՝** Շուկայական իշխանություն. մոնոպոլիա և մոնոպսոնիա: Պետական կարգավորման տեսական հիմնավորումը: **Թեմա 10՝** Շուկայական իշխանություն. Մոնոպոլիստական մրցակցությունը և օլիգոպոլիան: Արդյունավետությունը շուկայական հիմնական կառուցվածքներում: **Թեմա 11՝** Ռեսուրսների շուկաները: **Թեմա 12՝** Աշխատանքը շուկայական տարբեր կառուցվածքներում: **Թեմա 13՝** Ռենտան, տոկոսը և շահույթը արտադրության գործոնների շուկաներում: **Թեմա 14՝** Հասարակական բարիքները, արտաքին էֆեկտները և տեղեկատվական ընդհատումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 4,3,3 միավորով:

0105/B02. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել մաթեմատիկական անալիզի ներածական մասը՝ իրական թվեր, հաջորդականություն, ֆունկցիա, սահման, անընդհատություն, ածանցյալ, կիրառություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- կիմանա հաջորդականության և ֆունկցիայի սահմանների, անընդհատ ֆունկցիաների, ածանցյալի հիմնական հատկությունները,
- կհասկանա մաթեմատիկական անալիզի ներածական մասի հիմնական գաղափարներն ու սահմանումները:

Ունակ կլինի՝

- հաշվել հաջորդականության և ֆունկցիայի սահմանները,
- պարզել ֆունկցիայի անընդհատությունը,
- հաշվել ածանցյալներ:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա յուրացրած մաթեմատիկական գաղափարները կիրառել տնտեսագիտության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թվային հաջորդականություններ, հաջորդականության սահմանը: Ջուգամետ հաջորդականությունների հատկությունները: **Թեմա 2՝** Մասնակի հաջորդականություններ: Մոնոտոն հաջորդականություններ, e-թիվը **Թեմա 3՝** Թվային շարքեր, շարքի գումարը: Թվային շարքի զուգամիտության հայտանիշները: **Թեմա 4՝** Բացարձակ և պայմանական զուգամետ շարքեր: Լայբնիցի հայտանիշը: **Թեմա 5՝** Ֆունկցիայի սահմանը: Ֆունկցիայի սահմանի Հայնեի և Կոշիի սահմանումների համարժեքությունը: **Թեմա 6՝** Մեկ փոփոխականի ֆունկցիայի անընդհատությունը կետում և բազմության վրա: Խզման կետերի դասակարգումը: **Թեմա 7՝** Անընդհատ ֆունկցիաների լոկալ և գլոբալ հատկությունները: Վայերշտրասի և Բոլցանո-Կոշիի թեորեմները: **Թեմա 8՝** Ածանցյալ: Երկրաչափության, ֆիզիկայի և տնտեսագիտության խնդիրներ, որոնք հանգեցնում են ածանցյալի գաղափարին: **Թեմա 9՝** Տարրական ֆունկցիաների ածանցյալները, ածանցման կանոնները, բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալները: Լոգարիթմական ածանցյալ: **Թեմա 10՝** Անորոշությունների բացումը: Լոպիտալի կանոնը: **Թեմա 11՝** Մի քանի փոփոխականի ֆունկցիայի սահմանը, հաջորդական սահմաններ: Մի քանի փոփոխականի ֆունկցիայի անընդհատությունը: **Թեմա 12՝** Մի քանի փոփոխականի ֆունկցիայի մասնակի ածանցյալներ, ածանցյալ ըստ ուղղության, գրադիենտ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0105/B03. «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԾԱՅԻՆ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի դասընթացներում և որոշ տնտեսական մոդելներում օգտագործելու համար: Ծանոթացնել գծային հանրահաշվի արդիական մեթոդներին և տնտեսության վերլուծության խնդիրներում դրանց կիրառություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- ծանոթ կլինի գծային հավասարումների համակարգերի լուծման Գաուսի և Կրամերի եղանակներին,
- կլիմանա ուղղի և հարթության հավասարումները:
- Ունակ կատարել գործողություններ վեկտորների և մատրիցների հետ, լուծել գծային հավասարումների համակարգեր,
- հաշվել տրված վեկտորների սկալյար, վեկտորական և խառն արտադրյալները,
 - - հաշվել երկու ուղիղների, երկու հարթությունների, ուղղի և հարթության կազմած անկյունը, կետի հեռավորությունը ուղղից և հարթությունից:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1`** Վեկտորները որպես ուղղորդված հատվածներ: Վեկտորի կոորդինատները: Գործողություններ վեկտորների հետ: Վեկտորի պրոյեկցիա: Սկալյար արտադրյալ: Համագիծ, համահարթ, օրթոգոնալ վեկտորներ: **Թեմա 2` Ուղղի ընդհանուր, նորմալ, պարամետրական, կանոնական հավասարումները հարթության մեջ: Ուղիղների փոխդասավորվածությունը: Կետի հեռավորությունն ուղղից: Երկու անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 3`** Հարթության ընդհանուր և նորմալ հավասարումները, կետի հեռավորությունը հարթությունից: Ուղիղը որպես հարթությունների հատում: Ուղղի պարամետրական կանոնական հավասարումները տարածությունում: Երեք անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 4`** Ճառագայթի, կիսահարթության, կիսատարածության ուռուցիկությունը: Ռոուցիկ բազմությունների հատումը: Բազմության ուռուցիկ թաղանթ: Ռոուցիկ բազմանիստ: Ֆարկաշի թեորեմը: **Թեմա 5`** Տեղափոխություններ և տեղադրություններ, նրանց զույգությունը, քանակը: ո-րդ կարգի որոշիչ, նրա հատկությունները: Մինոր, լրացուցիչ մինոր հանրահաշվական լրացում, Լապլասի թեորեմը: Գծային հավասարումների համակարգի լուծման Գաուսի մեթոդը, Կրամերի կանոնը: **Թեմա 6`** Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: Չվերասերված քառակուսի մատրիցի հակադարձը, միավոր մատրից: Մատրիցային հավասարումներ: Քառակուսի մատրիցների արտադրյալի որոշիչը: **Թեմա 7`** Գծային տարածության սահմանումը, աքսիոմները և դրանց հետևանքները: Գծային տարածության վեկտորների անկախ և կախյալ համակարգեր: Վեկտորների համակարգի բազա (առավելագույն անկախ ենթահամակարգ) և ռանգ: Գծային տարածության բազիս: Մատրիցի ռանգը որպես սյուն վեկտորների համակարգի ռանգ: Մատրիցի ռանգը 0-ից տարբեր միներների միջոցով: **Թեմա 8`** Գծային հավասարումների համակարգի համատեղելիության Կրոնեկեր-Կապելիի թեորեմը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների

քայլը 0,5 է:

0104/B04. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (15 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական ինֆորմացիայի մշակման գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ.**

- ծանոթ կլինի տնտեսական ինֆորմացիայի ծրագրային մշակման սկզբունքներին և առանձնահատկություններին,
- կտիրապետի տիպային ծրագրավորման փաթեթներին:
- Ունակ կլինի կատարել տնտեսագիտական գործոնների արժեքների հաշվարկ VBA (Ms Excel միջավայրում) լեզվով,
- տիպային ծրագրավորման փաթեթները կիրառել տնտեսագիտական վերլուծություններում ու նախագծերի ավտոմատացման խնդիրներում:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել, կունենա տնտեսական ինֆորմացիան մշակելու հիմնարար գիտելիքներ՝ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական ինֆորմացիայի համակարգչային մշակման ծրագրային ապահովումը: **Թեմա 2՝** VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: **Թեմա 3՝** VBA լեզվի օպերատորները: **Թեմա 4՝** VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: **Թեմա 5՝** VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: **Թեմա 6՝** VBA-ում ֆորմաների, մենյուների և երկխոսային պատուհանների կիրառությունը: **Թեմա 7՝** Նախագծերի ավտոմատացումը դեկլարման էլեմենտների միջոցով:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B05. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տրնտեսության գործառնության մակրոտնտեսական օրինաչափություններին, տալ բավարար գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- կիմանա մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները:
- ծանոթ կլինի հավասարակշռության մոդելներին,
- ծանոթ կլինի պետության տնտեսական քաղաքականության ուղղություններին ու արդյունավետության չափանիշներին, արտաքին տնտեսական գործունեության հիմնարար սկզբունքներին:
- կունենա անհրաժեշտ մակրոտնտեսագիտական գիտելիքներ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար: առկա տեղեկատվության պայմաններում հաշվարկել տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների մեծությունները,
- ունակ կլինի վերլուծել իրականացվող պետական քաղաքականությունը և դրա վերաբերյալ անել որոշակի դատողություններ:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ

- կունենա անհրաժեշտ մակրոտնտեսագիտական գիտելիքներ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգային հաշիվների համակարգը: Համախառն ներքին արդյունքը: Գների ինդեքսներ և իրական մակրոցուցանիշներ: **Թեմա 2**՝ Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: **Թեմա 3**՝ Հիմնական մակրոտնտեսական կախվածությունները: **Թեմա 4**՝ Ամբողջական ծախսումները և արտադրության հավասարակշիռ ծավալը: **Թեմա 5**՝ Ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը: Հավասարակշռությունը «AD - AS» մոդելում և դրա փոփոխությունները: **Թեմա 6**՝ Ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 7**՝ Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականությունը: **Թեմա 8**՝ Ընդհանուր հավասարակշռությունը և «IS-LM» մոդելը: **Թեմա 9**՝ Տնտեսական աճը: **Թեմա 10**՝ Մակրոտնտեսական քաղաքականությունը և տեսությունը: Բանավեճային հարցեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 4,3,3 միավորով: Միավորների քայլը 0,5 է:

0105/B06. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համապատասխան մաթեմատիկական ապարատ՝ ֆակուլտետում դասավանդվող «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ», «Հավանականություն և կիրառական վիճակագրություն», «Միկրոէկոնոմիկա», «Մակրոէկոնոմիկա» և այլ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կիմանա դիֆերենցելի ֆունկցիաների, ինտեգրելի ֆունկցիաների և ինտեգրալի հատկությունները:
- Ունակ կլինի ածանցյալի միջոցով հետազոտել ֆունկցիաները,
- հաշվել անորոշ և որոշյալ ինտեգրալներ

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառել տնտեսագիտության խնդիրներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմանները:

Թեմա 2՝ Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները՝ Ռոլի, Լագրանժի և Կուշիի թեորեմները: **Թեմա 3՝** Թեյլորի բանաձևը և նրա մնացորդային անդամը: **Թեմա**

4՝ Ֆունկցիայի գրաֆիկի ասիմպտոտները: Ֆունկցիայի գրաֆիկի ուռուցիկությունը, շրջման կետեր: **Թեմա 5՝** Անընդհատ ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները հատվածում: Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկի կառուցման փուլերը: **Թեմա 6՝** Նախնական ֆունկցիա և անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հատկությունները: **Թեմա 7՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը անորոշ ինտեգրալում: **Թեմա 8՝** Որոշյալ ինտեգրալի սահմանումը, կորագիծ սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 9՝** Դարբուի գումարները և նրանց հատկությունները: Որոշյալ ինտեգրալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: **Թեմա 10՝** Ինտեգրելի ֆունկցիաների դասերը՝ անընդհատ ֆունկցիայի և մոնոտոն, սահմանափակ ֆունկցիայի ինտեգրելիությունը: **Թեմա 11՝** Որոշյալ ինտեգրալի հատկությունները: Միջին արժեքի թեորեմ: **Թեմա 12՝** Փոփոխական վերին սահմանով ինտեգրալի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 13՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը որոշյալ ինտեգրալում: **Թեմա 14՝** Որոշյալ ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 15՝** Անիսկական ինտեգրալներ: I և II սեռի անիսկական ինտեգրալների զուգամիտությունը: **Թեմա 16՝** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տեսության տարրերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0104/B07. «ԳՈՐԾՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տարբեր բնագավառներում առաջացած հիմնական գործնական խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման, դրանց միջոցով այդ խնդիրների լուծման եղանակների հետազոտման և կիրառման ունակություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**
 - ծանոթ կլինի գործույթների հետազոտման ժամանակակից մաթեմատիկական մոդելներին և դրանց լուծման եղանակներին,
 - կունենա անհրաժեշտ գիտելիքներ որոշումների կայացման տիպային մոդելների և լուծման եղանակների վերաբերյալ:
 - Ունակ կլինի որոշել հետազոտվող խնդրի (համակարգի) նպատակը, նկարագրել այլընտրանքային լուծումները, սահմանել վերջիններիս արդյունավետությունը,
 - կառուցել խնդրի մաթեմատիկական մոդելը և գտնել լավագույն լուծումը համաձայն ընդունված նպատակի:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**
 - կկարողանա տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները կիրառել տնտեսագիտական խնդիրներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մաթեմատիկական մոդելների կառուցման սկզբունքները և նպատակային հայտանիշների մշակումը: **Թեմա 2՝** Գծային ծրագրավորման ստանդարտ, երկակի, կանոնական խնդիրները, նրանց կապը, երկակիության թեորեմ: **Թեմա 3՝** Գծային ծրագրման խնդիրների լուծման հիմնական եղանակները: **Թեմա 4՝** Հոսքային խնդիրներ, նրանց կապը կոմբինատոր խնդիրների հետ, Ֆորդ-Ֆալկերսոնի թեորեմը և ալգորիթմը: **Թեմա 5՝** Դինամիկ ծրագրման եղանակը և այդ եղանակով խնդիրների լուծումը: **Թեմա 6՝** Խաղային խնդիրներ, մինիմաքսի թեորեմ, խաղերի տեսության հիմնական թեորեմ և նրա կապը երկակիության հետ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0105/B08. «ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է, ուսանողներին հաղորդել որոշակի գիտելիքներ պատահական մեծությունների և պատահական պրոցեսների, ինչպես նաև բաշխման ֆունկցիաների ու սահմանային թեորեմների, անհայտ պարամետրերի գնահատման ու վարկածների ստուգման տեսությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ***

- կտիրապետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության հիմնարար գիտելիքներին,
- կիմանա հավանականային հիմնական բանաձևերը:
- Ունակ կլինի հաշվել պատահույթի հավանականությունը, նրա բնութագրիչները,
- գնահատել անհայտ պարամետրերը և կատարել վարկածների ստուգում:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***

- կկարողանա հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության հիմնարար գիտելիքները կիրառել տնտեսագիտական խնդիրներում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հավանականային տարածություն: **Թեմա 2.** Պատահական մեծություն և բաշխման ֆունկցիա: **Թեմա 3.** Պատահական մեծությունների թվային բնութագրիչները: **Թեմա 4.** Սահմանային թեորեմներ :

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների

քայլը 0,5 է:

0201/B09. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա մասնագետների մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և պրակտիկ հմտություններ դրամական հոսքերի վերլուծության, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման, ֆինանսավարկային հաստատությունների գործարքների տոկոսների, ֆինանսական շուկայում շրջանառվող հիմնական գործիքների արժեքի և եկամտաբերության որոշման նպատակով օգտագործվող ֆինանսական հաշվարկների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կունենա գիտելիքներ ֆինանսական շուկաներում շրջանառվող ֆինանսական գործիքների եկամտաբերության գնահատման վերաբերյալ,
- կկարողանա որոշել արժեթղթերի արժեքը և եկամտաբերությունը, գնահատել ներդրումային ծրագրերի արդյունավետությունը, իրականացնել տարբեր տեսակի վարկերի համեմատական վերլուծություն:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- տարբեր իրավիճակներում ցուցաբերել ճիշտ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու կարողություններ

Թեմա 1՝ Պարզ և բարդ տոկոսադրույք: **Թեմա 2՝** Պարզ և բարդ գեղչադրույք: **Թեմա 3՝** Համարժեք տոկոսադրույք և գեղչադրույք: Ինֆլյացիայի ներառումը ֆինանսական հաշվարկներում: **Թեմա 4՝** Բերված արժեքի տնտեսագիտական բովանդակությունը և հաշվարկը: Անուիտետ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B09. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ և ՇՈՒԿԱՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից ֆինանսական շուկաների էությունը, տեսակները, գործառույթները և կառուցվածքը, ինչպես նաև ֆինանսական ինստիտուտների՝ դեպոզիտարիաների, ինվեստիցիոն ընկերությունների և հաշվարկային կազմակերպությունների գործառույթները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ***

- կիմանա ֆինանսական շուկաների գործարքների հիմնական ձևերը,
- կկարողանա գնահատել ֆինանսական շուկայում տարբեր իրավիճակները և օրինաչափությունները:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***

- տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել:

Թեմա 1՝ Ֆինանսական շուկաները տնտեսական համակարգում: ***Թեմա 2՝*** Փողի շուկա: ***Թեմա 3՝*** Արժեթղթերի էությունը և տեսակները: ***Թեմա 4՝*** Արժեթղթերի շուկա: ***Թեմա 5՝*** Արժույթի շուկա

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B11. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման գործընթացի, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ, տալ գիտելիքներ տնտեսության տարբեր ոլորտներում ու մակար-դակներում մոդելավորման հնարավորությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ***

- ծանոթ կլինի տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի հիմնարար սկզբունքներին և մեթոդներին,
- կլիմանա տնտեսական տարբեր երևույթների և գործընթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելները:
- ունակ կլինի տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով ընտրել համապատասխան տնտեսագիտամաթեմատիկական մեթոդը և հիմնավորել դրա կիրառման նպատակահարմարությունը,
- կոնկրետ տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով մշակել տնտեսամաթեմատիկական մոդելներ և դրանց կիրառմամբ կատարել համապատասխան հաշվարկներ:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***

- կունենա կոնկրետ տնտեսական իրավիճակներում որոշումների ընդունման ու հիմնավորման գիտելիքներ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ակնարկ: Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տնտեսա-մաթեմատիկական մոդելի հասկացությունը, մոդելների դասակարգումն ու հիմնական տիպերը, մոդելավորման փուլերը: **Թեմա 2՝** Տրնտեսական աճի մոդելները: **Թեմա 3՝** Արտադրության գծային մոդելներ: **Թեմա 4՝** Ցանցային մոդելներ: **Թեմա 5՝** Պաշարների կառավարման խնդիրները: **Թեմա 6՝** Օպտիմալ կառավարման խնդիրը: **Թեմա 7՝** Խաղային մոդելներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **5** միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը **0,5** է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **10** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ **2,5**-ական միավոր: Միավորների քայլը **0,5** է:

0201/B12. «ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ **4** ժամ (**30** ժամ դասախոսություն, **30** ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ **4-րդ, եզրափակիչ գնահատմամբ**

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ վիճակագրական մեթոդների օգտագործման հմտություններ, ծանոթացնել օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- ծանոթ կլինի օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին:

- Ունակ կլինի ինքնուրույն հավաքել, ամփոփել և վերլուծել տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալները,
 - Կկարողանա կատարել վիճակագրական տվյալների համադրումներ և համեմատական վերլուծություններ:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**
- կկարողանա իր տեսակետը հիմնավորել համապատասխան փաստարկներով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վիճակագրության առարկան, մեթոդը, խնդիրները և կազմակերպումը:
Թեմա 2. Վիճակագրական դիտարկումներ: **Թեմա 3.** Վիճակագրական ամփոփում, աղյուսակներ, խնբավորումներ: Գրաֆիկական մեթոդը վիճակագրության մեջ: **Թեմա 4.** Ընդհանրացնող վիճակագրական ցուցանիշներ: **Թեմա 5.** Միջին մեծություններ: **Թեմա 6.** Վարիացիայի ցուցանիշները: **Թեմա 7.** Ընտրանքային դիտարկում: **Թեմա 8.** Դինամիկայի շարքեր, դրանց վերլուծությունը: **Թեմա 9.** Ինդեքսներ, ինդեքսային մեթոդ: **Թեմա 10.** Փոխկապվածությունների վիճակագրական ուսումնասիրությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **5** միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը **0,5** է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **10** միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ **2,5**-ական միավոր: Միավորների քայլը **0,5** է:

0201/B13. «ՀԱՄԱՇԽԱԼ ՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ **4** ժամ (**30** ժամ դասախոսություն, **30** ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ **4-րդ, եզրափակիչ գնահատմամբ**

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխարհի տնտեսությունների համապարփակ նկարագիրը, տալ տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին, ինչը հիմք կհանդիսանա Հայաստանի արտաքին տնտեսական կապերի ասպարեզում ճիշտ կողմնորոշվելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- կունենա տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին,
- պրակտիկ աշխատանքի ընթացքում կկարողանա ճիշտ կողմնորոշվել տարբեր նպատակներով համագործակցության համար երկրների, ինչպես նաև ոլորտների և բնագավառների ընտրության հարցում:

- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- Ճիշտ գնահատել սեփական ունակությունները և որոշում կայացնել հետագա ուսումնառության կամ աշխատանքի կատարելագործման համար

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համաշխարհային տնտեսությունը և դրա զարգացման փուլերը: **Թեմա 2** Աշխատանքի միջազգային բաժանումը և կոռուպցիան: **Թեմա 3**՝ Արդիականության գլոբալ հիմնախնդիրները: **Թեմա 4**՝ Համաշխարհային տնտեսական աճի տեմպերն ու համամասնությունները: **Թեմա 5**՝ Միջազգային առևտուր: **Թեմա 6**՝ Միջազգային ֆինանսավորում: **Թեմա 7**՝ Աշխատուժի միջազգային միգրացիա: **Թեմա 8**՝ Միջազգային գիտատեխնիկական գործակցություն: **Թեմա 9**՝ Միջազգային ֆիրմաներ: **Թեմա 10**՝ Ազատ տնտեսական գոտիներ: **Թեմա 11**՝ Միջազգային տնտեսական ինտեգրացիան: **Թեմա 12**՝ Զարգացած երկրները համաշխարհային տնտեսության մեջ: **Թեմա 13**՝ Զարգացող երկրները համաշխարհային տնտեսության մեջ: **Թեմա 14**՝ Հայաստանի տնտեսության ինտեգրվածությունը համաշխարհային տնտեսության մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B14. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է օժանդակել ուսանողներին առավել համակողմանի ըմբռնել և յուրացնել ժամանակակից տնտեսագիտության ձևակերպումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- ծանոթ կլինի տնտեսագիտության զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման պատմությանը,

- կիմանա ժամանակակից հայտնի տնտեսագիտական ուսմունքների հիմնական մոտեցումները:

- Ունակ կլինի տնտեսական տարբեր հիմնախնդիրները վերլուծել և մեկնաբանել տնտեսագիտական տարբեր ուղղությունների տեսանկյունից,

- Կկարողանա կատարել տարբեր տնտեսագիտական տեսությունների համեմատական վերլուծություն:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկել տարբեր տնտեսագիտական ուսմունքների համատեքստում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտական մտքի պատմության ներածություն: **Թեմա 2՝** Տնտեսագիտական միտքը Հին Աշխարհում: **Թեմա 3՝** Տնտեսագիտական պատկերացումները Միջին Դարերում: **Թեմա 4՝** Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները: **Թեմա 5՝** Դասական քաղաքատնտեսության սկիզբն Անգլիայում և Ֆրանսիայում: **Թեմա 6՝** Ադամ Սմիթը և նրա <Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն> աշխատությունը: **Թեմա 7՝** Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը, Ժ. Բ. Սեյ, Թ. Ռ. Մալթուս: **Թեմա 8՝** Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: **Թեմա 9՝** Ջոն Ստյուարտ Միլը և նրա <Քաղաքատնտեսության սկզբունքները>: **Թեմա 10՝** Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 11՝** Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ: **Թեմա 12՝** Մարժինալիզմը. սահմանային օգտակարության տեսությունը: **Թեմա 13՝** Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 14՝** Ինստիտուցիոնալիզմ: **Թեմա 15՝** Քեյնսյան տեսությունը: **Թեմա 16՝** Նոր Պահպանողական տեսությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B15. «ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ»(3 ԿՐԵԴԻՏ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել պետական ֆինանսական ռեսուրսների ձևավորման և ծախսման մեխանիզմների, բյուջետավորման մեթոդների և դրանց իրավական հիմքերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա՝

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կտիրապետի բյուջետային համակարգին, պետական և տեղական բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրներին և դրանց ծախսման ուղղություններին,
- ծանոթ կլինի բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման եղանակներին և պետական պարտքի կառավարման հիմնախնդիրներին,
- պատկերացում կկազմի ծրագրային բյուջետավորման համակարգի և պետական ֆինանսական վերահսկողության մեխանիզմների մասին:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- ստացած գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պետական ֆինանսների էությունը: **Թեմա 2՝** Բյուջետային համակարգը: **Թեմա 3՝** Տեղական ֆինանսներ: **Թեմա 4՝** Բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման խնդիրները (սենյորաժ, պետական պարտատոմսեր և արտաքին ֆինանսավորում): **Թեմա 5՝** Ծրագրային բյուջետավորման համակարգի էությունը և ներդրման հնարավորությունները: **Թեմա 6՝** Ֆինանսական վերահսկողություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0104/B16. «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել տնտեսական տարբեր իրավիճակների համակարգչային մոդելավորման, օպտիմիզացիայի խնդիրների լուծման, տվյալների հենքերի ստեղծման, կառավարման և վերլուծության հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կկարողանա բացատրել MS Excel և MS Access ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական գործընթացների մոդելավորման և վերլուծության սկզբունքները և դրանց կիրառությունները:
- Ունակ կլինի MS Excel և MS Access կիրառական փաթեթներով լուծել մասնագիտական խնդիրներ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կունենա մասնագիտական խնդիրները համակարգչային փաթեթներով լուծելու և վերլուծություններ կատարելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Microsoft Excel կիրառական փաթեթի ընդլայնված հնարավորությունները: **Թեմա 2**՝ Տնտեսական իրավիճակների մոդելավորումը Microsoft Excel-ում: **Թեմա 3**՝ Տվյալների հենքերի ստեղծումը և կառավարումը Microsoft Access համակարգում: **Թեմա 4**՝ Տվյալների հենքերի վերլուծությունը Microsoft Excel-ում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: /Համակարգչային ստուգում/

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: /Համակարգչային ստուգում/

0201/B17. «ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության հիմնական ֆունկցիաների, կառուցվածքային տարրերի ու հատկությունների, ձեռնարկության գործունեության կազմակերպման առանձնահատկությունների, ռեսուրսների, ծախսերի ու արդյունքների ուսումնասիրումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կիմանա ձեռնարկության տնտեսական վարքի բնույթը շուկայի ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների համատեքստում,

- ունակ կլինի սահմանել ձեռնարկության գործունեության նպատակը և խնդիրները,

- կկարողանա ինքնուրույն կայացնելու պարզագույն կառավարչական որոշումներ:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***

-կունենա ձեռնարկության նպատակադրումների ձևակերպման, ձեռնարկատիրությունների կազմակերպման, մոդելավորման և ինքնուրույն կերպով կառավարչական որոշումների կայացման գործնական հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2**՝ Ձեռնարկատիրական գործունեությունը որպես ձեռնարկության գործունեության օբյեկտ: Ձեռնարկատիրական կորպորատիվ ձևերը: **Թեմա 3**՝ Ձեռնարկության գործունեության իրավական դաշտը ՀՀ-ում: **Թեմա 4**՝ Ձեռնարկության շուկայական մոդելը և մրցունակությունը: **Թեմա 5**՝ Արտադրական պրոցեսի կազմակերպումը ձեռնարկությունում: **Թեմա 6**՝ Արտադրության տնտեսական և սոցիալական արդյունավետությունը: **Թեմա 7**

Ձեռնարկության աշխատանքի նորմավորման հիմունքները: **Թեմա 8**
 Ձեռնարկության /ֆիրմայի/ ներդրումային գործունեությունը: **Թեմա 9**
 Ձեռնարկության հիմնական և շրջանառու միջոցները: **Թեմա 10**
 Ձեռնարկության /ֆիրմայի/ տնտեսական գործունեության պլանավորումը: **Թեմա 11**
 Ձեռնարկության արտադրական հզորությունը և արտադրական ծրագիրը: **Թեմա 12**
 Ձեռնարկության կադրերը: Աշխատանքի արտադրողականությունը և ձեռնարկության աշխատակիցների թվաքանակի պլանավորումը: **Թեմա 13**
 Արտադրության ծախսերը: Կալկուլյացիան: Ծախսերի նախահաշիվը: **Թեմա 14**
 Ձեռնարկության շահույթը և շահութաբերությունը: **Թեմա 15**
 Ձեռնարկության գնային քաղաքականությունը: **Թեմա 16**
 Ձեռնարկության ֆինանսների կառավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B18. «ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրո-տնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նըպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել տնտեսվարող սուբյեկտների վարքագծի օրինաչափությունները և պատկերացում կազմել միկրոտնտեսական ցուցանիշների միջև առկա առնչությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- ծանոթ կլինի միկրոտնտեսական հիմնական հասկացություններին և օրինաչափություններին,
- կիմանա սպառողական վարքի և ֆիրմայի տեսությունները,
- ծանոթ կլինի շուկայական տարբեր մոդուլներում հավասարակշռության և օպտիմալության ձևավորման մեխանիզմներին,
- ունակ կլինի կոնկրետ տվյալների կիրառմամբ լուծել սպառողի օգտակարության մաքսիմալացման, ձեռնարկության արտադրանքի ծավալի

մաքսիմալացման, ծախքերի մինիմալացման, շահույթի մաքսիմալացման և այլ տիպային տնտեսագիտամաթեմատիկական խնդիրներ,

- ունակ կլինի կանխատեսել և մեկնաբանել տարբեր երևույթների ու գործընթացների հնարավոր ազդեցությունը տնտեսական սուբյեկտների վարքագծի վրա:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- ստացած գիտելիքները կարող են արդյունավետ բազա լինել ճշգրիտ ինֆորմացիայի հավաքագրման, ռացիոնալ մշակման և պետական կառավարման մարմիններին այն տրամադրման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սպառողի նախընտրությունները և բյուջետային սահմանափակումը: Օգտակարության ֆունկցիա: **Թեմա 2՝** Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խնդիրները: **Թեմա 3՝** Եկամտի և փոխարինման էֆֆեկտները: Սլուցկու հավասարումը: **Թեմա 4՝** Սպառողական ավելցուկ: Փոխհատուցված և համարժեք վարիացիաներ: **Թեմա 5՝** Արտադրական ֆունկցիաներ և ծախսերի երկրաչափություն: **Թեմա 6՝** Շահույթի մաքսիմալացումը կատարյալ մրցակցության, զուտ մենաշնորհի և օլիգոպոլիայի պայմաններում: **Թեմա 7՝** Ընդհանուր հավասարակշռության տեսություն: Բարեկեցության թեորեմները: **Թեմա 8՝** Շուկային բացերը (մենաշնորհ, տեղեկատվական ասիմետրիա, հանրային բարիքներ և էսթեոնալիթիներ) և դրանց պետական կարգավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմարը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B19. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ բազային տեսական և էվոլյուցիոն գիտելիքներ համաշխարհային տնտեսության զարգացման մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- ծանոթ կլինի միջազգային առևտրի և միջազգային ֆինանսների հիմնական տեսություններին,

- կիմանա միջազգային առևտրի և արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու հասկացությունները:
- *Ունակ կլինի*
- *(բուն մասնագիտական կարողություններ)*
- վերլուծել միջազգային առևտրի և ֆինանսների ոլորտում տեղի ունեցող գործընթացները,
- գնահատել դրանց հնարավոր ազդեցությունները երկրի տնտեսության վրա:
- ✓ ***Ընդհանական կոմպետենցիաներ***
- կկարողանա տնտեսագիտական խնդիրները դիտարկել համաշխարհային առևտրի և միջազգային շուկաների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Առևտրատնտեսական տեսությունների և հայացքների առաջացումը: **Թեմա 3՝** Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տեսությունների ձևավորումը: **Թեմա 4՝** Համաշխարհային տնտեսության աճը և ռեսուրսների շուկա: **Թեմա 5՝** Աշխատանքային ռեսուրսների միգրացիա: **Թեմա 6՝** Կապիտալի շարժը համաշխարհային տնտեսությունում: **Թեմա 7՝** Վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը: **Թեմա 8՝** Հովանավորչական քաղաքականություն: **Թեմա 9՝** Ոչ մաքսային քաղաքականություն: **Թեմա 10՝** Միջազգային արժույթային համակարգի ձևավորումը: **Թեմա 11՝** Միջազգային դրամավարկային կազմակերպություններ: **Թեմա 12՝** Տնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության պայմաններում: **Թեմա 13՝** Գլոբալիզացիան և համաշխարհային տնտեսությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B20. «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»(4 ԿՐԵԴԻՏ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

պարապմունքներ,

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ ներդրումային պորտֆելների կազմման և կառավարման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել կապիտալ բյուջետավորման էությունը և մեթոդները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- կտիրապետի կապիտալ բյուջետավորման մեթոդներին,
- կկարողանա կազմել ներդրումային պորտֆել, որոշել պորտֆելի եկամտաբերությունը և ռիսկը,
- կտիրապետի կապիտալի արժեքի որոշման և ֆինանսական որոշում-ների կայացման մեթոդներին:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- տարբեր իրավիճակներում ցուցաբերել ճիշտ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու կարողություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փողի ժամանակային արժեքը և կապիտալ բյուջետավորումը: **Թեմա 2՝** Ռիսկը կապիտալ բյուջետավորման մեջ: **Թեմա 3՝** Պորտֆելի կառավարման հիմունքներ: **Թեմա 4՝** Կապիտալի արժեք և կառուցվածք: **Թեմա 5՝** Դիվիդենդային քաղաքականություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 10 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B21. «ԷԿՈՆՈՄԵՏԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տնտեսագիտական հետազոտություններում քանակական և որակական էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին կունենա՝

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

-ունակ կլինի համակարգչային փաթեթների կիրառությամբ գնահատել իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը,

-կյուրացնի տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական մոտեցումները և էկոնոմետրիկ մոդելների տեսակները

-ունակ կլինի վիճակագրական մեթոդների օգնությամբ ստուգել մոդելների համապատասխանության և պարամետրերի վերաբերյալ տարբեր վարկածներ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

-Էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ կլուծի մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ,

-կկարողանա տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարել տնտեսագիտական վերլուծություններ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Ռեգրեսիոն մոդելներ Գաուս-Մարկովի պայմաններում: **Թեմա 2՝** Վիճակագրական թեստերի կիրառում: **Թեմա 3՝** Բազմակոլինեարություն: **Թեմա 4՝** Բազմադիսպերսիայնություն (հետերոսկեդաստիկություն): **Թեմա 5՝** Ավտո-ռեգրեսիոն մոդելներ: **Թեմա 6՝** Դինամիկ մոդելներ: **Թեմա 7՝** Միաժամանակյա հավասարումների միջոցով տրվող մոդելների ուսումնասիրում: **Թեմա 8՝** Պանել-լային տվյալներով տրվող մոդելների ուսումնասիրում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/ B 22 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել տնտեսական, հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվապահությունների առանձնահատկությունները, կազմակերպման ձևերը: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- սահմանել և բացատրել հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը,

- բացատրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների առանձնահատկությունները, ֆինանսական հաշվառման գործառնությունները, խնդիրները, սկզբունքները
- մեկնաբանել դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- աշխատել թիմում, շփվել մասնագիտական լեզվով, անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հաշվապահական հաշվառման առարկան և մեթոդը: **Թեմա 2՝** Հաշվապահական հաշվեկշիռ / ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն / և հաշիվներ: Կրկնակի գրանցում: **Թեմա 3՝** Գնահատում և կալկուլյացիա: Փաստաթղթավորում և գույքագրում: **Թեմա 4՝** Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը, հաշվային պլան: **Թեմա 5՝** Ֆինանսական հաշվառման տեսակները, սկզբունքները :

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումները գրավոր են /թեստեր, առաջադրանքներ, խնդիրներ/, յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B23. «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (45 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար և 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել բանկային համակարգը, Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի ֆունկցիաները, խնդիրները, ինչպես նաև դրանց կողմից իրականացվող գործառնությունները, մատուցվող ծառայությունների տեսակները, ձևերը և եղանակները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- կիմանա բանկային համակարգի էությունը և առանձնահատկությունները,
- կիմանա կենտրոնական բանկի և առևտրային բանկերի գործառնությունները,
- ծանոթ կլինի բանկերի կողմից իրականացվող գործառնություններին, մատուցվող ծառայությունների տեսակներին, ձևերին և եղանակներին:
- ունակ կլինի ինքնուրույն իրականացնել առևտրային բանկի տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների գնահատում և վերլուծություն,
- կատարել բանկերի գործառնություններից բխող աշխատանքներ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կտիրապետի իրավիճակային խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բանկային համակարգ: **Թեմա 2՝** Առևտրային բանկերի ակտիվային և պասիվային գործառնություններ: **Թեմա 3՝** Առևտրային բանկերը որպես արժութային և արժեթղթերի շուկայի մասնակիցներ: **Թեմա 4՝** Առևտրային բանկերի գործունեության ֆինանսական արդյունքների ամփոփ գնահատման համակարգեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B24. «ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է համակարգչային մոդելների օգնությամբ ներկայացնել ձեռնարկությունների ծախսերի կառավարման և բյուջետավորման ժամանակակից փորձը, ծանոթացնել ձեռնարկության արդյունավետ կառավարման համար հաշվառման ժամանակակից համակարգի ձևավորման հիմնական սկզբունքներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- ծանոթ կլինի ծախսերի և ծախսումների դասակարգմանը, արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիայի մեթոդներին:
- ունակ կլինի կատարել ծախս – ծավալ - շահույթ վերլուծություն,
- կատարել ծախսումների դասակարգում և ինքնարժեքի կալկուլյացիա:
- կիրապետի անուղղակի ծախսերը արտադրանքի ինքնարժեքի վերագրման մեթոդներին,
- կտիրապետի ներքին հաշվառման խնդիրներին,

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա ստացված տեղեկատվության հիման վրա կատարել վերլուծություն և կայացնել կառավարչական որոշումներ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Կառավարչական հաշվառման դերը, նշանակությունը, առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Ծախսերի դասակարգումը և վարքագիծը: **Թեմա 3՝** Ծախսերի գնահատումը: **Թեմա 4՝** Նյութական ծախսերի հաշվառումը: **Թեմա 5՝**

Աշխատանքային ծախսերի հաշվառումը: **Թեմա 6** Ծախսերի հաշվառման պատվերային մեթոդը: **Թեմա 7** Ծախսերի հաշվառման փուլային մեթոդը: **Թեմա 8** Արտադրական վերադիր ծախսերի հաշվառումը: **Թեմա 9** Ծախսերի հաշվառման սահմանային մեթոդը: **Թեմա 10** Ծախսաձածկման վերլուծությունը: **Թեմա 11** Ծախսերի հաշվառման նորմատիվային մեթոդը: **Թեմա 12** Բյուջետային պլանավորումը և վերահսկողությունը: **Թեմա 13** Գնագոյացումը և որոշումների կայացումը: **Թեմա 14** Ինքնարժեքի հաշվառման ABC մեթոդը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B25. «ՌԻՄԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (15 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ռիսկ հասկացությանը, ռիսկի ընդհանուր կառավարման խնդիրներին, նույնականացման, չափման, կառավարելիության ու վերահսկողության, ինչպես նաև մոնիտորինգի մեխանիզմներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- կիմանա ապահովագրության հիմնական հասկացություններն ու առանձնահատկությունները, ապահովագրական հատուցման սկզբունքներն ու եղանակները, ապահովագրության կարգավորման օրենսդրա-իրավական հիմքերը,
- կիմանա ռիսկերի կառավարման մոտեցումներն ու եղանակները, դրանց կանխարգելման եղանակները, տրոհման և փոխանցելիության սկզբունքները, ապահովագրական պահուստների ձևավորման և տեղաբաշխման առանձնահատկությունները,
- տեղեկացված կլինի ապահովագրական շուկայի մասնակիցներին ներկայացվող պահանջների, ապահովագրական սակագնի սահմանման ձևերի և կանոնների մասին:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- աշխատել թիմում, շփվել մասնագիտական լեզվով, անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել, կատարել առաջարկություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռիսկ կատեգորիայի հիմնական հասկացությունը: **Թեմա 2՝** Ռիսկի ընդհանուր և ապահովագրական կառավարումը: **Թեմա 3՝** Ապահովագրության էությունը, նպատակը և խնդիրները: **Թեմա 4՝** Ապահովագրության սահմանումները: **Թեմա 5՝** Ապահովագրման տեսակները և դասակարգումը: **Թեմա 6՝** Ապահովագրական հարաբերությունների կարգավորման օրենսդրական հիմունքները ՀՀ-ում: **Թեմա 7՝** Ապահովագրական պայմանագիր: **Թեմա 8՝** Ռիսկերի կանխար-գելման եղանակները և վերաապահովագրության ինստիտուտը: **Թեմա 9՝** Ապահովագրական շուկայի ինստիտուցիոնալ մասնակիցները: **Թեմա 10՝** Ապահովագրական ծառայությունների գնագոյացման առանձնահատկությունները: **Թեմա 11՝** Ապահովագրողների գործունեության կարգավորումը և ֆինանսական կայունության ապահովումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B26. «ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա կապերը, մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

- Ծանոթ կլինի մակրոտնտեսական հիմնական հասկացություններին և օրինաչափություններին,
- Կիմանա մակրոտնտեսագիտության հիմնական տեսությունները,
- Ծանոթ կլինի շուկայական տարբեր մոդելներում հավասարակշռության և օպտիմալության ձևավորման մեխանիզմներին:
- Ունակ կլինի մեկնաբանելու մակրոտնտեսական տարբեր ցուցանիշների փոխկապակցվածությունը, վերլուծելու և մեկնաբանելու պետության մակրոտնտեսական քաղաքականությունը և գնահատելու դրա հնարավոր ազդեցությունը կանխատեսելու և մեկնաբանելու տարբեր երևույթների ու գործընթացների հնարավոր ազդեցությունը տնտեսության և դրա առանձին հատվածների վրա:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա հետագա մասնագիտական դասընթացներում կիրառել ստացած հիմնարար մակրոտնտեսագիտական գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մակրոտնտեսագիտության ներածություն: **Թեմա 2՝** Մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի ներածություն: **Թեմա 4՝** Սպառում. խնայողություններ և ներդրումներ: **Թեմա 5՝** Ընթացիկ հաշիվը և միջազգային առևտուրը: **Թեմա 6՝** Փողի պահանջարկը և առաջարկը: **Թեմա 7՝** Իրական փոխանակային կուրսեր: **Թեմա 8՝** Ինֆլյացիա: **Թեմա 9՝** Մակրոտնտեսական քաղաքականությունը ու թողարկումը փակ տնտեսությունում: **Թեմա 10՝** Մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսությունում՝ ֆիքսված և լողացող փոխանակային կուրսի պայմաններում: **Թեմա 11՝** Ինֆլյացիա, գործազրկություն, գործարար ցիկլեր: **Թեմա 12՝** Երկարաժամկետ տնտեսական աճ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B27. «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ-2» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել տնտեսական, հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվապահությունների առանձնահատկությունները, կազմակերպման ձևերը: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

Կրթական արդյունքները

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ՝

դասընթացի փաթեթի շրջանակներում

-սահմանել, մեկնաբանել, հաշվառել կազմակերպության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը,

- լուծել հաշվապահական խնդիրներ, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևակերպումներ, աշխատել հաշվային պլանով, լրացնել և ստուգել հաշվապահական փաստաթղթեր,

- օգտվել հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնել:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- աշխատել թիմում, շփվել մասնագիտական լեզվով, անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել, կատարել առաջարկություններ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կազմակերպության ակտիվների հաշվառում **Թեմա 2**՝ Կազմակերպության պարտավորությունների հաշվառումը: **Թեմա 3**՝ Եկամուտների և ծախսերի հաշվառումը: Տնտեսավարման ֆինանսական հետևանքների ձևավորումը և հաշվառումը: **Թեմա 4**՝ Սեփական կապիտալի հաշվառումը: **Թեմա 5**՝ Ֆինանսական հաշվետվություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր ընդամենը 8 միավոր, իսկ 2 միավորը տրվում է ինքնուրույն աշխատանքից: Միավորների քայլը 0,25 է:

0201/B28. «ՄԵՆԵՋՄԵՆԹ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (45 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակը ուսանողներին արդյունաբերական և ոչ արդյունաբերական կազմակերպությունների և նրանց արդյունավետ կառավարման վերաբերյալ գիտական տեղեկատվության մատուցումն է, որը թույլ կտա ձեռք բերել կազմակերպության առջև դրված նպատակներն իրականացնելու ունակություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- ծանոթ կլինի շուկայական մրցակցային միջավայրում գործող կազմակերպության կառավարման հարցերին,
- կունենա ստրատեգիական պլանավորման բավարար գիտելիքներ,
- կունենա գիտելիքներ կազմակերպչական գործընթացների, կազմակերպության նախագծման, մարդկանց գործունեության շարժառիթների, լիդերության, իշխանության և այլնի մասին:

- Ունակ կլիինի
- (բուն մասնագիտական կարողություններ)
- ձեռնարկության ներկա իրավիճակից ելնելով պարզագույն խնդիրների համար կայացնել ճիշտ կառավարչական որոշումներ,
- կատարել աշխատանքի և պարտականությունների ճիշտ բաշխում աշխատակիցների միջև:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**
 - կկարողանա աշխատել թիմում և հարաբերվել կոլեկտիվի անդամների հետ, կկարողանա ճիշտ կառավարել աշխատաժամանակը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մենեջմենթի տեսության ներածություն: **Թեմա 2՝** Մենեջմենթի զարգացումը և կայացումը: **Թեմա 3՝** Ժամանակակից մենեջմենթի հիմնական մոտեցումները. կառուցվածքային տարրերը, նպատակները, առանձնահատուկ գծերը: **Թեմա 4՝** Կազմակերպության միջավայրը և ենթակառուցվածքը: **Թեմա 5՝** Մենեջերի գործունեության ուղղությունները կազմակերպությունում: **Թեմա 6՝** Մենեջմենթի գործառույթները և կապակցող գործընթացները կազմակերպությունում.

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատույնը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B29. «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ»

(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (45 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ) Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ մարդկային ռեսուրսների շարժի, դրանց կառավարման, աշխատանքի շուկայի, աշխատանքի վարձատրման, կազմակերպման, գործազրկության և կադրերի վերապատրաստման, սոցիալական ապահովության ծրագրերի, ինչպես նաև այդ խնդիրների պետական կարգավորման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**
 - կունենա բավարար գիտելիքներ աշխատանքի ժամանակակից տնտեսագիտության վերաբերյալ,

- կտիրապետի ձեռնարկության և աշխատանքի շուկայի մակարդակով աշխատանքային հարաբերությունների վերլուծության և կառավարման մեթոդներին,
- ունակ կլինի կատարել աշխատանքի շուկայի վերլուծություն,
- կկարողանա կատարել բանկերի գործառնություններից բխող աշխատանքներ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կտիրապետի իրավիճակային խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխատանքի էկոնոմիկայի առարկան և մեթոդը: **Թեմա 2՝** Բնակչության աշխատանքային կառուցվածքը և զբաղվածությունը: **Թեմա 3՝** Աշխատանքի շուկա: **Թեմա 4՝** Աշխատանքի առաջարկը: **Թեմա 5՝** Աշխատանքի պահանջարկը: **Թեմա 6՝** Աշխատուժի որակը: **Թեմա 7՝** Տեղաշարժը աշխատանքի շուկայում: **Թեմա 8՝** Գործազրկություն: **Թեմա 9՝** Աշխատանքի ներքին շուկաները և ձեռնարկությունում աշխատանքի կառավարումը: **Թեմա 10՝** Աշխատանքի պայմանները և կազմակերպումը: **Թեմա 11՝** Աշխատանքի արտադրողականությունը: **Թեմա 12՝** Աշխատավարձ և աշխատանքի խթանում: **Թեմա 13՝** Արհմիությունները և սոցիալական համագործակցությունը: **Թեմա 14՝** Աշխատանքային հարաբերությունների և աշխատանքի շուկայի պետական կարգավորումը: **Թեմա 15՝** Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) և աշխատանքային հարաբերությունների կարգավորման միջազգային փորձը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/Յ30. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»(4 կրեդիտ)
Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում տնտեսական գործունեության վերլուծության կարևորության, տնտեսական գործունեության վերլուծության եղանակների, ինչպես նաև վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ու մշակման մասին: Անհրաժեշտ է ուսանողներին ծանոթացնել կազմակերպության ֆինանսական դրության, արդյունքի, սնանկացման և ռիսկի գնահատման մեթոդիկային:

Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- դասընթացի փաթեթի շրջանակներում կարող է ընտրել անհրաժեշտ տնտեսական ինֆորմացիան, կազմել վերլուծական աղյուսակներ, բացահայտել ցուցանիշների փոփոխությունները նախորդ տարիների նկատմամբ:
- ստացված տեղեկատվության հիման վրա կատարելու ֆինանսական դրության, ֆինանսական արդյունքների գնահատում, ինչպես նաև ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների, պարտավորությունների արդյունավետության վերլուծություն

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- աշխատել թիմում, շփվել մասնագիտական լեզվով, անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել, կատարել առաջարկություններ

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B31. «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (15 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի առանձնահատկություններին և դրա օրենսդրական ապահովմանն առնչվող հարցերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- կիմանա ժամանակակից տնտեսության պայմաններում հարկային համակարգի կողմից լուծման ենթակա խնդիրները,
- կտիրապետի հարկային համակարգի էությանը և գործառույթներին,
- տեղեկացված կլինի ՀՀ հարկային համակարգի կառուցվածքին, գործող հարկատեսակներին և դրանց հաշվարկման ու գանձման մեխանիզմներին:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հարկերի տնտեսական բովանդակությունը: **Թեմա 2՝** ՀՀ հարկային համակարգը: **Թեմա 3՝** ՀՀ պետական հարկերը: **Թեմա 4՝** ՀՀ տեղական հարկերը: **Թեմա 5՝** Հարկերին փոխարինող հարկեր: **Թեմա 6՝** Հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B32. «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ֆինանսների տնօրինման հիմնարար տեսական մոտեցումները, ինչպես նաև գործնականում ցույց տալ տարբեր իրավիճակներում ֆինանսական որոշումների կայացման և կիրառման ձևերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կիմանա ֆինանսների կառավարման ժամանակակից տեսությունները և ֆինանսական վերլուծության մեթոդները,
- կտիրապետի ֆինանսական գործակիցներով որոշումների կայացման մեթոդներին,
- կկարողանա իրականացնել կազմակերպության ֆինանսական պլանավորում և արդյունավետության վերլուծություն:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ***

- Ճիշտ գնահատել սեփական ունակությունները և որոշում կայացնել հետագա ուսումնառության կամ աշխատանքի կատարելագործման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆինանսների էությունը և ֆինանսական համակարգ: **Թեմա 2՝** Ֆինանսների կառավարման հիմունքներ: **Թեմա 3՝** Ֆինանսական որոշումների կայացում, ֆինանսական գործակիցներ: **Թեմա 4՝** Ֆինանսավորման աղբյուրներ և կանխիկի կառավարում: **Թեմա 5՝** Ապրանքանյութական պաշարների և դեբիտորական պարտքի կառավարում: **Թեմա 6՝** Ֆինանսական պլանավորում և շուկայական արդյունավետություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B33. «ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (15 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակը ուսանողներին ծանոթացնել շուկայագիտության ընդհանուր հարցերի տեսությանը և պրակտիկային, շուկայավարման գործունեության կոնկրետ ուղղություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***
 - ծանոթ կլինի շուկայագիտության ընդհանուր հարցերի տեսությանը և պրակտիկային,
 - կունենա բավարար գիտելիքներ առաքման և գնային քաղաքականության, ինչպես նաև գովազդի կազմակերպման վերաբերյալ:
 - ունակ կլինի ինքնուրույն իրականացնել շուկայագիտական հետազոտություններ,
 - կկարողանա մշակել և առաջարկել արտադրանքի իրացումը խթանող միջոցառումներ,
 - ունակ կլինի գնահատել գովազդի տարբեր տեսակների արդյունավետությունը առանձին ապրանքատեսակների համար:
- ✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***
 - կկարողանա ստացած գիտելիքները համադրել այլ դասընթացների համանման թեմաներն ուսումնասիրելիս:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարքեթինգի ներածություն: ***Թեմա 2՝*** Մարքեթինգային հետազոտությունների համակարգը: ***Թեմա 3՝*** Ապրանքը և ապրանքային քաղաքականությունը: ***Թեմա 4՝*** Մարքեթինգային կոմունիկացիաների համակարգը: ***Թեմա 5՝*** Մարքեթինգի կազմակերպումը ձեռնարկությունում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0201/B34. «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 10 ժամ (48 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 8–րդ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի նպատակն է դիտարկել հանրային (պետական) հատվածի տնտեսագիտությունը և տնտեսության պետական կարգավորման հիմնական ուղղություններն ու մեխանիզմները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ՝**

- ծանոթ կլինի խառը տնտեսությունում պետության՝ որպես կարգավորող և տնտեսավորող սուբյեկտի գործունեության մեթոդաբանական և տեսական հիմունքներին,
- կունենա ամբողջական պատկերացում պետության տնտեսական գործառույթների մասին,
- կիմանա մակրոմակարդակում տնտեսական լուծումների վերաբերյալ որոշումների կայացման սկզբունքները և մեխանիզմները, ինչպես նաև կարգավորման մեթոդներն ու ներազդման լծակները:
- ունակ կլինի վերլուծել և մեկնաբանել իրականացվող պետական տնտեսական քաղաքականությունը,
- գնահատել պետական միջամտության հնարավոր ազդեցությունները,
- ներկայացնել առաջարկություններ առանձին խնդիրների լուծման նպատակով պետական միջամտության ձևերի և եղանակների վերաբերյալ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- տեղեկացված կլինի պետական տարբեր մարմինների հիմնական գործառույթների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսության պետական կարգավորման դերը, դրսևորման ձևերը, սկզբունքները և մեթոդները: **Թեմա 2՝** Տնտեսության հանրային հատվածը: Հանրային բարիքներ: Հանրային հատվածի եկամուտները և ծախսերը: **Թեմա 3՝** Վերաբաշխում, արդյունավետություն և հասարակության բարեկեցություն: **Թեմա 4՝** Բյուջետային ֆեդերալիզմ: **Թեմա 5՝** Տնտեսության պետական կարգավորման մարմինները ՀՀ-ում և դրանց ֆունկցիաները: **Թեմա 6՝** Հարկաբյուջետային քաղաքականությունը մակրոտնտեսական կարգավորման համակարգում: **Թեմա 7՝** Ֆինանսական համակարգի և բանկային համակարգի կարգավորումը: **Թեմա 8՝** Դրամավարկային քաղաքականությունը մակրոտնտեսական կարգավորման համակարգում: **Թեմա 9՝** Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը: **Թեմա 10՝** Հակամենաշնորհային քաղաքականությունը: **Թեմա 11՝** Պետության ճյուղային տնտեսական քաղաքականությունը: **Թեմա 12՝** Պետության սոցիալական քաղաքականության ուղղությունները: **Թեմա 13՝** Աշխատանքի շուկայի և զբաղվածության պետական կարգավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B35. «ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 10 ժամ (48 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել բիզնեսի կառավարման տեսական և գործնական հիմունքները, հիմնական հասկացությունները, զարգացման դիալեկտիկան և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ ***Մասնագիտական կոմպետենցիաներ՝***

- կիմանա բիզնեսի կազմակերպման և կառավարման գործընթացի բաղադրիչները և փուլերը:
- ունակ կլինի վերլուծել հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները՝ համապատասխան քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմաններում,
- կկարողանա մշակել բիզնես պլաններ և գնահատել դրանց գործնական կիրառման հնարավորությունները տարբեր սոցիալ-տնտեսական իրավիճակներում:

✓ ***Ընդհանրական կոմպետենցիաներ՝***

- կկարողանա կատարել տարբեր դասընթացներից ստացված գիտելիքների համադրում և սինթեզ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բիզնեսի կառավարման հիմունքները: **Թեմա 2՝** Կառավարչական նոր մտածելակերպ: **Թեմա 3՝** Ձեռնարկությունների գործունեությունը շուկայական տնտեսությունում: **Թեմա 4՝** Ձեռնարկությունների ստեղծումը և զրանցումը: **Թեմա 5՝** Բիզնես-պլանի մշակման մեթոդաբանությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հար-

ցատումը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

4.1.1. Դասընտրական դասընթացներ

0201/B36. «ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎՈՒՄՆԵՐԵՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների առավել զարգացումը: Դասընթացի շրջանակում հիմնական շեշտը դրվում է մասնագիտական գործավարության հմտությունների զարգացմանը, ինչը ենթադրում է թիրախ լեզվով տարբեր փաստաթղթերի ձևերի, դրանց հատուկ բառապաշարի և քերականական կառույցների ուսումնասիրություն: Միաժամանակ ուշադրություն է դարձվում ուսանողների լեզվական հաղորդակցական կարողությունների զարգացմանը մասնագիտական թեմատիկ առավել լայն ընդգրկմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

-կտիրապետի օտար լեզվով բանավոր և գրավոր մասնագիտական խոսք կառուցելու հմտություններին:

-կազմել գործավարական փաստաթղթեր մասնագիտության բնագավառում,

-թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ

- կկարողանա ռուսաց լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քերականություն, մասնագիտական բառապաշար և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում: Գործնական էթիկա: **Թեմա 2՝** Փաստաթղթերի ձևակերպման կանոնների և գործավարության կազմակերպումը: **Թեմա 3՝** Կառավարման փաստաթղթային ապահովումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0201/B37. «ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինստիտուցիոնալ տնտեսագիտության էվոլյուցիոն առանձնահատկություններին, էությանը, մեթոդաբանությանը, հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև օգնել նրանց առավել համակողմանի ըմբռնել և յուրացնել տնտեսության ինստիտուցիոնալ փոփոխության հնարավորությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- ծանոթ կլինի ինստիտուցիոնալ տնտեսագիտության էությանը, էվոլյուցիային, հիմնական մոտեցումներին,
- ունակ կլինի տնտեսական հիմնախնդիրները մեկնաբանել ինստիտուցիոնալ տնտեսագիտության տեսանկյունից,
- կկարողանա դիտարկել տարբեր երկրների տնտեսություններում ոչ տնտեսական գործոնների դերը:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ներածություն: **Թեմա 2՝** Տնտեսվարող սուբյեկտի ռացիոնալության կանխավարկածը և մարդու էության ինստիտուցիոնալիստական մեկնաբանությունը: **Թեմա 3՝** Տնտեսական բարեփոխումների ինստիտուցիոնալ մեկնաբանությունները: **Թեմա 4՝** Տրանսակցիոն ծախքերի և արտաքին էֆեկտների տեսակները, առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Զարգացող և զարգացած երկրների ինստիտուցիոնալ հիմքերը և առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B37. «ՄԱՔՍՍՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամփոփ ձևով ներկայացնել մաք-սային հսկողության էությունը, Եվրասիական Տնտեսական Միությանը անդամա-կցելուց

հետո ՀՀ-ում կիրառվող մաքսային ընթացակարգերի, մաքսային արժեքի որոշման և մաքսային վճարների գանձման հիմնական առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- համապարփակ պատկերացում կկազմի մաքսային համակարգի հիմնական առանձնահատկությունների, մաքսային մարմինների հիմնական խնդիրների և ԵՏՄ օրենսդրության շրջանակներում իրականացվող մաքսային հսկողության վերաբերյալ,
- կտիրապետի մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացման տեխնիկային,

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա օգտագործել մաքսային ոլորտի օրենսդրական և տեսական գիտելիքները արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ՀՀ անդամակցումը ԵՏՄ-ին և ԵՏՄ կառուցվածքը: **Թեմա 2՝** Մաքսային հսկողության էությունը: **Թեմա 3՝** Մաքսային ընթացակարգերը և դրանց տեսակները: **Թեմա 4՝** Մաքսային արժեքի հասկացությունը և որոշման մեթոդները: **Թեմա 5՝** Մաքսային վճարներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B37. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել դինամիկ շրջապատի պայմաններում կազմակերպության ռազմավարական կառավարման կոնցեպցիայի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կունենա հստակ ձևավորված տեսակետ կազմակերպության կառավարման որպես շրջապատի դինամիկ փոփոխման պայմաններում կազմակերպության ճկուն վարք ապահովող գործունեության վերաբերյալ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- տարբեր իրավիճակներում ցուցաբերել ճիշտ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու կարողություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռազմավարական կառավարման էությունը, բովանդակությունը և անհրաժեշտությունը: **Թեմա 2՝** Ռազմավարական կառավարման փուլերը և տեսակները: **Թեմա 3՝** Կազմակերպության արտաքին և ներքին միջավայրի ռազմավարական վերլուծություն: **Թեմա 4՝** Կազմակերպությունների ռազմավարությունները, դրանց էությունը և դասակարգումը: **Թեմա 5՝** Ռազմավարական այլընտրանքների ձևավորման վերաբերյալ մոտեցումներ: Ռազմավարության ընտրություն: **Թեմա 6՝** Բիզնես-պլանը որպես ռազմավարական կառավարման տարր: **Թեմա 7՝** Ռազմավարության իրագործումը և վերլուծությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B37. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր պատմա-կան ժամանակահատվածներում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, տնտեսության կարևորագույն ոլորտների, տարբեր երկրների տնտեսությունների կազմակերպական ձևերի զարգացման գործընթացներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կլիմանա մարդկային քաղաքակրթությունների տնտեսական զարգացման հիմնական օրինաչափությունները,
- ծանոթ կլինի տնտեսական բարեփոխումների պատմական փորձին,

- կիմանա առաջատար երկրների տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, տնտեսական առաջընթացի ապահովման կարևոր ուղղությունները:

- ունակ կլինի տնտեսական իրավիճակի վերլուծության ընթացքում համադրել պատմական փաստերը և տեղեկատվությունը,

- կակրողանա տարբեր երկրների տնտեսությունների զարգացման առանձնահատկությունների համադրությամբ կատարել որոշակի կանխատեսումներ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կունենա անհրաժեշտ գիտելիքներ հետագա մասնագիտական դասընթացները յուրացնելու համար:

- յուրացրած կլինի առաջատար երկրների տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական պատմության դասընթացի ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2՝** Ստրկատիրություն: **Թեմա 3՝** Ավատատիրություն (ֆեոդալիզմ): **Թեմա 4՝** Միջնադարյան տնտեսությունների հիմնական բնութագիրը: **Թեմա 5՝** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և կապիտալիստական տնտեսակարգի ձևավորումը Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 6՝** Հյուսիս-Ամերիկյան գաղութների տնտեսությունը 17-18-րդ դարերում: Անկախության պատերազմը և քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: **Թեմա 7՝** Արդյունաբերական հեղաշրջումը և Արևմտյան Եվրոպայի տնտեսական գերիշխանությունը: **Թեմա 8՝** Տեխնոլոգիական հեղափոխությունը և ԱՄՆ-ի տնտեսական գերիշխանությունը: **Թեմա 9՝** Արևմտյան Եվրոպայի տնտեսական զարգացման առանձնահատկությունները 19-րդ դարի վերջին: **Թեմա 10՝** Ռուսական կայսրության տնտեսության հիմնախնդիրները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: **Թեմա 11՝** Ճապոնիայի տնտեսության հիմնախնդիրները 19-րդ դարում: **Թեմա 12՝** Տնտեսության վիճակը աշխարհի առաջատար երկրներում առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մեծ ճգնաժամը ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 13՝** Տնտեսության վիճակը աշխարհի առաջատար երկրներում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: **Թեմա 14՝** Համաշխարհային սոցիալիստական տնտեսական համակարգ, զարգացումը, հակասությունները և փլուզումը: Անցումային տնտեսությունների ձևավորումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B38. ԱՆՇԱԸԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գնահատման տար-բեր մեթոդներին և ժամանակակից համակարգային ծրագրերի միջոցով նրանց հնարավորություն ընձեռել՝ կատարելու տարբեր գույքային միավորների և, ընդհանուր առմամբ, բիզնեսի գնահատում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**
 - կկարողանա կատարել տարբեր նշանակության անշարժ գույքի միավորների գնահատում,
 - կտիրապետի անշարժ գույքի ոլորտում ներդրումային վերլուծության հմտություններին:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**
 - ստացած գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գնահատման հիմնական հասկացությունները: Գնահատման ստանդարտներ: **Թեմա 2՝** Գնահատման եկամտային մեթոդը: **Թեմա 3՝** Գնահատման ծախսային մեթոդը: **Թեմա 4՝** Գնահատման համեմատական (շուկայական) մեթոդը: **Թեմա 5՝** Տարբեր մեթոդներով ստացված արդյունքների համադրումը և գույքի արժեքի որոշումը: **Թեմա 6՝** Գնահատման հաշվետվություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B38. «ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել բանկային նոր տեխնոլոգիաները, իրականացնել բանկային նորագույն ծառայությունների համեմատական վերլուծություն և բացահայտել նորագույն տեխնոլոգիաների կապը ավանդական բան-կային ծառայությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- տեղեկացված կլինի բանկային նոր տեխնոլոգիաների մասին,
- ծանոթ կլինի ժամանակակից վճարահաշվարկային համակարգերին:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- ստացած գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժամանակակից տեխնոլոգիաների էությունը և կապը բանկային տեխնոլոգիաների հետ: **Թեմա 2՝** Պլաստիկ քարտերը որպես ժամանակակից բանկային տեխնոլոգիա: **Թեմա 3՝** Վճարահաշվարկային համակարգերը և ժամանակակից տեխնոլոգիաները: **Թեմա 4՝** INTERNET Banking, Home Banking, SIMBanking, SMS Banking and Phone Banking ժամանակակից բանկային ծառայու-թյունները և դրանց առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Արժույթային դիվիզը և վարկային ռեզիստորը որպես ժամանակակից բանկային տեխնոլոգիաներ: **Թեմա 6՝** Միջազգային առևտրի առևտրի սպասարկման գործիքները և ժամանակակից բանկային տեխնոլոգիաները: **Թեմա 7՝** Լիզինգը որպես ժամանակակից ծառայություն: **Թեմա 8՝** Ֆակտորինգը և արժեթղթավորումը որպես նորագույն ծառայություններ առևտրային բանկերում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B38. «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԷԹԻԿԱ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից կազմակերպությունների գործունեության արհեստավարժ ղեկավարման մեթոդները, միջոցները և հնարքները, որոնք նպաստում են ընկերության ներդրումային գրավչությանը, ինչպես նաև շահույթի ավելացմանը՝ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման միջոցով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- պատկերացում կունենա ժամանակակից կազմակերպություններում լուծում պահանջող գործնական խնդիրների՝ որակի կառավարման համակարգը ISO 9001:2015 ստանդարտի պահանջներին համապատասխանեցնելու, ֆինանսական և ներդրումային կառավարումը, ռիսկ-մենեջմենթը բազելյան կոմիտեի պահանջներին համապատասխանեցնելու, լիազորությունների բաշխման ժամանակ պահանջվող գործողությունների և այլնի վերաբերյալ,
 - ծանոթ կլինի ժամանակակից կազմակերպությունների ղեկավարների, բաժնետերերի և ենթակաների փոխհարաբերություններում վարքագծի նորմերի պահանջներին,
 - կիմանա կորպորատիվ կառավարում իրականացնող ստորաբաժանումների գործառույթները, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև այդ գործունեությամբ զբաղվող անձնակազմից պահանջվող հմտությունները, գիտելիքները և կարողությունները:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**
- պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կորպորատիվ կառավարման գործընթացները և մեթոդները; **Թեմա 2՝** Կորպորատիվ կառավարման կազմակերպումը: **Թեմա 3՝** Կորպորատիվ կառավարման ֆունկցիոնալ կառուցվածքը: **Թեմա 4՝** Ընկերության ախտորոշում: **Թեմա 5՝** Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր: **Թեմա 6՝** Կորպորատիվ կառավարման/վարքագծի կոդեքսը: **Թեմա 7՝** Ղեկավարների և ենթակաների աշխատանքային փոխհարաբերությունների ուսումնասիրությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B38.«ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել վարկավորման գործընթացը, վարկերի տեսակները, վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը, ինչպես նաև վարկային տոկոսի գնագոյացման մեխանիզմները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- ✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- կիմանա բանկերում և վարկային կազմակերպություններում իրականացվող վարկավորման գործընթացի, վարկի սպասարկման, հաճախորդի վարկունակության գնահատման, ինչպես նաև վարկային տոկոսների որոշման հիմունքներին,
- ծանոթ կլինի ՀՀ բանկային համակարգում տրամադրվող վարկերի տեսակներին և վարկավորման պայմաններին, ինչպես նաև վարկավորման գործընթացը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերին:
- ✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**
- կկարողանա ստացված տեղեկատվության հիման վրա կատարել վարկային պորտֆելի վերլուծություն և գնահատում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վարկի դերն ու նշանակությունը տնտեսությունում: **Թեմա 2՝** Վարկային ռիսկը և դրա տեսակները: **Թեմա 3՝** Վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա 4՝** Վարկի ապահովվածության եղանակները: **Թեմա 5՝** Բանկի հաճախորդների վարկունակության գնահատումը: **Թեմա 6՝** Վարկային պորտֆելի վերլուծությունը, գնահատումը և կառավարումը: **Թեմա 7՝** Բանկերի ներքին իրավական ակտերը: Վարկավորման գործընթացներ: **Թեմա 8՝** Իրավիճակային խնդիրների լուծում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. ԱՈՒԴԻՏԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել աուդիտի հիմունքները, պարզաբանել աուդիտորական գործունեության էությունը, ֆինանսական հաշվետվության աուդիտի սկզբունքներն ու կազմակերպման ձևերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կիմանա աուդիտի կիրառման նշանակությունը,
- կտիրապետի աուդիտի պլանավորման գործընթացին,
- կկարողանա օգտագործել աուդիտորական գործընթացները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա ստացված տեղեկատվության հիման վրա կատարել աուդիտորական եզրակացություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աուդիտի իրականացման մեթոդաբանությունը: **Թեմա 2՝** Աուդիտի գործընթացի փուլերը: **Թեմա 3՝** Աուդիտի պլանավորումը: **Թեմա 4՝** Աուդիտորական ապացույցների ձեռք բերման հիմնական եղանակները: **Թեմա 5՝** Աուդիտի փաստաթղթավորումը: **Թեմա 6՝** Աուդիտորական եզրակացություն: **Թեմա 7՝** Սեփական կապիտալի աուդիտ: **Թեմա 8՝** Ոչ ընթացիկ ակտիվների աուդիտ: **Թեմա 9՝** Ընթացիկ ակտիվների աուդիտ: **Թեմա 10՝** Պարտավորությունների աուդիտ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է բակալավրիատի ուսանողներին ներկայացնել արտաքին տնտեսական հարաբերությունների հիմնահարցերը, տալ միջազգային և ազգային տնտեսական անվտանգությունների համապարփակ նկարագիրը, ինչպես նաև ներկայացնել տարբեր երկրների փորձը միջազգային տնտեսական անվտանգությունում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- կունենա անհրաժեշտ գիտելիքներ միջազգային տնտեսական հարաբերությունների համատեքստում անվտանգության հիմնահարցեր՝ հասկացության, էության, առանձնահատկությունների, անվտանգության ընդգրկման ոլորտների, ինչպես նաև ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում ազգային տնտեսական անվտանգության վերաբերյալ:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ

- Ճիշտ գնահատել սեփական ունակությունները և որոշում կայացնել հետագա ուսումնառության կամ աշխատանքի կատարելագործման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային տնտեսական հարաբերությունների էությունը և ձևավորման նախադրյալները: **Թեմա 2՝** Տնտեսական ինտեգրում և գլոբալացում: **Թեմա 3՝** Արտաքին առևտրային քաղաքականությունների հիմնական ձևերը: **Թեմա 4՝** Միջազգային տնտեսական կազմակերպությունների տեղն ու դերը միջազգային տնտեսական հարաբերություններում: **Թեմա 5՝** Կապիտալի և աշխատուժի միջազգային շարժը և դրանց վրա ազդող գործոնները: **Թեմա 6՝** Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման յուրահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. «ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել պատկերացում ներդրումային գործունեության մասին, պարզաբանել բազային հասկացությունները, նախապատրաստել ուսանողին իրական և ֆինանսական ներդրումների ոլորտում պրակտիկ գործունեությանը (ներդրումների ֆինանսավորման աղբյուրների ընտրության, ինչպես նաև առավել արդյունավետ ներդրումների իրականացման բնագավառում և այլն):

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- կունենա ներդրումների կառավարման բնագավառում տեսական գիտելիքներ,
- կկարողանա գնահատել ներդրումների գրավչությունը, ռիսկը և համապատասխան որոշումներ կայացնել,
- կկարողանա պլանավորել աշխատանքը կազմակերպություններում:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- կկարողանա ստացված տեղեկատվության հիման վրա կատարել ներդրումային ռիսկերի վերլուծություն և գնահատում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներդրումների տնտեսագիտական բովանդակությունը: **Թեմա 2՝** Ներդրումների դասակարգումը և տեսակները: **Թեմա 3՝** Ներդրումային գործընթացը և ներդրումային շուկայի մեխանիզմը: **Թեմա 4՝** Ներդրումային գործունեության

Ֆինանսավորում: **Թեմա 5՝** Ներդրումային ծրագրավորում /պլանավորում/
ձեռարկությունում: **Թեմա 6՝** Ներդրումային ռիսկերի վերլուծությունը և
գնահատումը: **Թեմա 7՝** Ներդրումային միջավայրը ՀՀ-ում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է
առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B38. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հիմնական ֆինանսական ռիսկերը, դրանց գնահատման, վերլուծության և կառավարման գործընթացները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- ծանոթ կլինի ժամանակից առավել տարածված ռիսկերի տեսակներին,

- կկարողանա գնահատել և չափել բացահայտված ռիսկերը,

- կկարողանա ընտրել ռիսկերի կառավարման գործիքների համապատասխան գործիք, հիմնավորել ընտրված գործիքի արդյունավետությունը և նպատակային կիրառությունը:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կկարողանա ստացված տեղեկատվության հիման վրա կատարել ֆինանսական ռիսկերի վերլուծություն և գնահատում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆինանսական ռիսկերի էությունը, բովանդակությունը և ռիսկերի կառավարման խնդիրները: **Թեմա 2՝** Ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդները և մոտեցումները: **Թեմա 3՝** Ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացը: **Թեմա 4՝** Ֆինանսական ռիսկերի գնահատման և վերլուծության մեթոդները: **Թեմա 5՝** Ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատման մեթոդները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել հաշվապահական հաշվառման առավել մեծ տարածում ստացած ավտոմատացված համակարգերը և դրանցով կատարել տարբեր գործնական առաջադրանքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կտիրապետի հաշվապահական հաշվառման առավել տարածված ավտոմատացված համակարգերին, ինչը հնարավորություն կտա խուսափել բազմաթիվ սխալներից և խնայել աշխատաժամանակը,
- կկարողանա հաշվապահական ծրագրի օգտագործումով բավականաչափ արագ կերպով ստանալ կազմակերպությունում վերլուծական աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկատվությունը,
- կկարողանա անհրաժեշտության դեպքում հաշվապահական ծրագրի միջոցով ստացվող տեղեկատվությունն օգտագործել ֆինանսատնտեսական գործունեության զարգացման ու օպտիմալացման նպատակով:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- աշխատել թիմում, շփվել մասնագիտական լեզվով, անհայտ իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հաշվապահական ծրագրերի հնարավորությունները և ՀՀ-ում առավել տարածված հաշվապահական ծրագրերը: **Թեմա 2՝** Առաջին մուտքը հա-մակարգ. Համառոտ ծանոթություն ենթահամակարգերի հետ: **Թեմա 3՝** «Հաշվա-պահություն» ենթահամակարգ: **Թեմա 4՝** «Պահեստ» ենթահամակարգ: **Թեմա 5՝** «Բանկ» ենթահամակարգ: **Թեմա 6՝** «Արագամաշ առարկաներ» ենթահամակարգ: **Թեմա 7՝** «Հիմնական միջոցներ» ենթահամակարգ: **Թեմա 8՝** «Աշխատավարձ» ենթահամակարգ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացը նպատակ է հետապնդում ուսանողներին ծանոթացնել միջազգային բիզնեսի հիմնական սկզբունքներին ու մեթոդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- կկարողանա բացահայտել այն առանձնահատկությունները, որոնց հետ բախվում են ընկերությունները օտար երկրներում գործունեություն ծավալելիս,
- կկարողանա վերլուծել գործունեության հաջող ծավալման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, ինչպես նաև գործունեության ծավալման հետ առնչվող ռիսկերի նվազեցման եղանակները:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ**

- կտիրապետի իրավիճակային խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային բիզնեսը և դրա դրսևորումները: **Թեմա 2՝** Միջազգային բիզնեսը համաշխարհային տնտեսությունում: **Թեմա 3՝** Միջազգային բիզնեսի միջավայրը: **Թեմա 4՝** Միջազգային բիզնեսի ձևավորման հիմքերը: **Թեմա 5՝** Միջազգային բիզնեսի արժույթաֆինանսական հատվածը: **Թեմա 6՝** Վերազգային կորպորացիաները և միջազգային բիզնեսը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ֆինանսական միջնորդության ինստիտուտի, ներդրումային, կենսաթոշակային և այլ տիպի կուտակային հիմնադրամների գործունեությանը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ Մասնագիտական կոմպետենցիաներ

- կիմանա ներդրումային, կենսաթոշակային և այլ կուտակային հիմնադրամների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, ակտիվների ներդրման հիմնական օբյեկտները և պորտֆելի կառավարման հիմնական տեսությունները,
- ծանոթ կլինի տարբեր երկրներում գործող կենսաթոշակային համակարգերին,
- պատկերացում կունենա ոչ պետական կենսաթոշակային ապահովության և մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների մասին:

✓ Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- ստացած գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆինանսական միջնորդների դերը ֆինանսական շուկայում: **Թեմա 2՝** Ներդրումային հիմնադրամների դերը ֆինանսական ռեսուրսների կուտակման և վերաբաշխման գործընթացում: **Թեմա 3՝** Ներդրումային հիմնադրամների տեսակները և դրանց գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Ժամանակակից կենսաթոշակային համակարգեր: **Թեմա 5՝** Մասնավոր կենսաթոշակային հիմնադրամներ: **Թեմա 6՝** Կենսաթոշակների կուտակային մասի կառավարումը: **Թեմա 7՝** Ապահովագրական հիմնադրամներ: Պարտադիր և կամավոր ապահովագրություն: **Թեմա 8՝** Կուտակված ֆինանսական միջոցների կառավարման մոդելները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0201/B39. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ֆինանսական իրա-վունքի առանցքային ինստիտուտների բովանդակությունը, ֆինանսական իրա-վունքի հիմնարար հասկացությունները, գործող ֆինանսական օրենսդրության հիմնական դրույթները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

✓ **Մասնագիտական կոմպետենցիաներ**

- պատկերացում կունենա պետության ֆինանսական գործունեության, ֆինանսական իրավունքի՝ որպես իրանունքի ճյուղի մասին,
- կիմանա բյուջետային իրավունքի հիմունքները, պետական ծախսերի իրավական կարգավորման առանձնահատկությունները,
- ձեռք կբերի գիտելիքներ շուկաների, արժույթային կարգավորման և վերահսկողության մասին:

✓ **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

- կտիրապետի իրավիճակային խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պետության ֆինանսական գործունեությունը: **Թեմա 2՝** ՀՀ ֆինանսական իրավունքի առարկան և համակարգը: **Թեմա 3՝** Ֆինանսական իրավունքի գիտությունը: **Թեմա 4՝** Ֆինանսական նորմեր և հարաբերություններ: **Թեմա 5՝** Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա 6՝** ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների կառուցվածքը: **Թեմա 7՝** Հարկային իրավունքի հիմունքներ: **Թեմա 8՝** Շուկայի արժույթային գործունեության իրավական կարգավորումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

4.2. Զբոսաշրջություն » մասնագիտություն

0202/B01. Զբոսաշրջության հիմունքներ /4 կրեդիտ/

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար),

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել մասնագիտության բովանդակությանը, խնդիրներին, ուղղություններին, ներկայացվող պահանջներին:

Բացահայտվում է սոցիալ-մշակութային ծառայություններ դերը և նշանակությունը զբոսաշրջության բնագավառում: Ուսումնասիրվում են սոցիալական պայմանների գնահատումը, մշակութային ծառայությունների տեսակները, զբոսաշրջության դերը և

նշանակությունը հասարակական կյանքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա կունենա.

Մասնագիտական կոմպետենցիաներ

սահմանել և թվարկել մասնագիտության հետ կապված հասկացությունները օրենքները, մեթոդները

ներկայացնել և մեկնաբանել իր մասնագիտության տեսական և կիրառական կողմերը:

Ընդհանրական կոմպետենցիաներ

Կարողանալ համեմատել, վերլուծել և դասակարգել զբոսաշրջային ծառայությունները, ենթակառուցվածքները, կատարել առաջարկություններ և կայացնել որոշումներ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Զբոսաշրջության հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Զբոսաշրջային ձեռնարկություններ: **Թեմա 4՝** Սոցիալ-մշակութային ծառայությունների դասակարգումը: **Թեմա 5՝** Զբոսաշրջիկների տեղավորման միջոցները: **Թեմա 6՝** Տրանսպորտային սպասարկում: **Թեմա 7՝** Անվտանգության և ապահովագրության իրականացումը զբոսաշրջության ոլորտում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0202/B02. Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ),

Կիսամյակը՝ 1-ին, առ. եզրափակիչ գնահատման

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համապարփակ գիտելիքներ հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության հիմնարար հասկացությունների, բաղադրիչների, աշխարհի քաղաքական քարտեզի, բնական պայմանների, ռեսուրսների ԳՏՀ և համաշխարհային տնտեսության, մարդկության համամոլորակային հիմնախնդիրների և աշխարհի ինքնատիպ տարածաշրջանների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա կունենա

Մասնագիտական կոմպետենցիաներ

ներկայացնել և սահմանել աշխարհագրության միասնական գիտության համակարգում “հասարակական աշխարհագրության” տեղը և դերը բացատրել և մեկնաբանել հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունները և բաղադրիչները

Ընդհանրական կոմպետենցիաներ

տիրապետել հասարակական աշխարհագրական հետազոտության մեթոդներին և սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսման էությանը, աշխատել թիմում, կատարել առաջարկություններ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրության նպատակը և խնդիրները, բովանդակությունը և կառուցվածքը, գրական աղբյուրների տեսություն: **Թեմա 2՝** Հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունները: **Թեմա 3՝** Երկրագնդի բնական պայմանները և ռեսուրսները: **Թեմա 4՝** Աշխարհի քաղաքական բաժանումը և քարտեզը: **Թեմա 5՝** ԳՏՀ և Համաշխարհային տնտեսությունը: Համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը: Հիմնական ճյուղերի բնութագիրը: **Թեմա 6՝** Համաշխարհային տնտեսության ոլորտների ու ճյուղերի բնութագիրը: **Թեմա 7՝** Միջազգային տնտեսական կապերը: **Թեմա 8՝** Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները: **Թեմա 9՝** Աշխարհի ինքնատիպ տարածաշրջանները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0202/B03. Զբոսաշրջային երկրագրություն /4 կրեդիտ/

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)
Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված և ամբողջական տուրիզմի զարգացման տեսանկյունից համալիրային երկրագրական վերլուծության մարդաբանության և տեսության վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա կունենա.

Մասնագիտական կոմպետենցիաներ

վերլուծել և սահմանել համալիրային երկրագրության հիմնական ուղղություններն ու բաղադրիչները, վերլուծության հիմնական մեթոդները.

մեկնաբանել համալիրային երկրագրության հիմնական բաղադրիչների հատկանիշներն ու փոխադարձ կապերը

Ընդհանրական կոմպետենցիաներ

կատարել երկրագրության առանձին բաղադրիչների գնահատում տուրիստական հնարավորությունների օգտագործման և տուրիզմի զարգացման տեսանկյունից

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համալիրային երկրագրության աշխարհագրական էությունը: **Թեմա 2**՝ Համալիրային երկրագրության գործառույթները, հիմնախնդիրները, գործնական նշանակությունը: **Թեմա 3**՝ Համալիրային երկրագրությունը և տուրիզմը: **Թեմա 4**՝ Համալիրային երկրագրության վերլուծության սխեմաները: **Թեմա 5**՝ Համալիրային երկրագրական հիմնական բաղադրիչները, դրանց տուրիստական հնարավորությունների գնահատումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B04. «ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ), Կիսամյակը՝ 1-ին, առ. եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ մարդու, նրա էության և պահանջմունքների, անհատի և հասարակության պահանջմունքների բավարարման մեթոդների, սերվիսի բովանդակության, անհրաժեշտության, գործնական նշանակության մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա կունենա

Մասնագիտական կոմպետենցիաներ

թվարկել և նկարագրել մարդու պահանջմունքները և դրանց բավարարման մեթոդները

մեկնաբանել սերվիսի ոլորտը և նրա առանձին բաղադրիչների դերն ու անհրաժեշտությունը մարդու պահանջմունքների բավարարման գործում

պլանավորել սերվիսի ձեռնարկության գործունեությունը՝ ծառայությունների շուկայի ենթակառուցվածքի և սպառողի պահանջմունքների փոփոխություններով պայմանավորված, այդ թվում՝ սոցիալական քաղաքականության հաշվառմամբ

Ընդհանրական կոմպետենցիաներ

կարողանալ ընդունել և հարգել այլ ժողովրդների սովորություններն ու մշակույթը ընդունակ լինել միջմշակութային հաղորդակցության զբոսաշրջային ինդուստրիայում հասկանալ իր ապագա մասնագիտության սոցիալական դերը

Բովանդակությունը

Թեմա 1՝ Դասընթացի նպատակը, առարկան և խնդիրները, կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 2**՝ Մարդը և նրա էությունը: Մարդու պահանջմունքները: **Թեմա 3**՝ Սերվիսը որպես մարդու պահանջմունքների

բավարարման միջոց: **Թեմա 4** Սերվիսի բովանդակությունը, դերը, զարգացման նախադրյալները: Սերվիսային ծառայության որակը: **Թեմա 5** Սերվիսային գործունեությունը որպես տնտեսության բաղկացուցիչ մաս: **Թեմա 6** Սերվիսային գործունեության կապը աշխարհագրական և ժողովրդագրական գործոնների հետ: **Թեմա 7** Սերվիսային գործունեությունը որպես մշակույթի բաղկացուցիչ մաս: **Թեմա 8** Սերվիսի ոլորտի կառավարումը: **Թեմա 9** Զբոսաշրջությունը որպես մարդու պահանջմունքների բավարարման համակարգի բաղադրիչ: **Թեմա 10** Սերվիսի դերը կայուն զարգացման մեջ:

Գնահատման մեթոդները և չափանիշները

2 ընթացիկ գրավոր ստուգում, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 20 հարց, յուրաքանչյուրը 0,5-ական միավոր:

0201/B05. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար),

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա կունենա

Մասնագիտական կոմպետենցիաներ

ներկայացնել տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը, մեկնաբանել առաջարկը և պահանջարկը

Ընդհանրական կոմպետենցիաներ

կարողանալ աշխատել թիմում, կատարել շուկայի վերլուծություն, կազմել վճարային հաշվեկշիռ

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2**՝ Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3**՝ Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4**՝ Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5**՝ Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6**՝ Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7**՝ Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8**՝ Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9**՝ Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10**՝ Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11**՝ Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12**՝ Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13**՝ Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14**՝ Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15**՝ Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0202/ B06. ՌԵԿՐԵԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՆՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ /3 կրեդիտ/

Շաբաթական՝ 45 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առ.եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական և համակարգված գիտելիքներ հաղորդել ռեկրեացիոն ծառայությունների, դրանց տեսակների, զարգացման և կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

Մասնագիտական կոմպետենցիաներ

բացահայտել ռեկրեացիոն գործունեության հիմնական հասկացությունները, թվարկել ռեկրեացիոն գործունեության տեսակները և հիմնավորել ցիկլերի տեսությունը, վերլուծության ենթարկել ռեկրեացիոն ծառայությունների էությունն ու կազմակերպման առանձնահատկությունները

Ընդհանրական կոմպետենցիաներ

